

ՌՈՄԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

պարսկական գիրք. թեկնածու, ՀԱԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԶՐԻՆԵՐԻ «ԲՈՒԿԱ ԲԱՐԱՆԵ» («ԱՆՁՐԵԻԻ ՀԱՐԱ») ԵՒ ՄՅՈՒՄ ԱՆՁՐԵԻԱԲԵՐ ՍԵՍԵՐԸ

Երաժուրթյուն¹. Ջրային ռեսուրսների առկայությունը որոշիչ նշանակություն ունի մարդկության համար: Ջրի մատչելիությունը գլխավոր սահմանափակող գործոնն է հատկապես գյուղատնտեսական եւ մասնավորապես բուսաբուծական տնտեսավարում ունեցող համայնքների համար: Ջրային ռեսուրսների հասանելիությունը մեծապես կախված է տվյալ տարածաշրջանի կլիմայական պայմաններից, հիմնականում՝ մթնոլորտային տեղումների քանակից: Եղանակի «կարգավորման» ժողովրդական մեթոդները՝ մասնավորապես անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերը եւ դրանց առնչվող հավատալիքները, ենթադրաբար, գոյություն են ունեցել վաղնջական ժամանակներից, թերեւս երկրագործության հիմնադրման սկզբնական շրջաններից: Այդ ծեսերի ու արարողությունների ազդեցության արդյունավետությունը ոչ ոք չի հաշվարկել, դրանց ազդեցության ֆիզիկական-բնագիտական բացատրություն չկա, սակայն այդ ավանդույթներն ու հավատալիքները գոյատևում են ժողովրդի մեջ եւ կիրառվում են անգամ մեր օրերում:

Անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերը եւ արարողությունները հայերի մեջ լայն տարածում են ունեցել, եւ դրանց ուսումնասիրութ-

¹ Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ «Հայաստանի եզրինների եւ քրդերի բուսաբուծական եւ հավաքչական ավանդույթները» (№ SCS 13-6F457) գիտական նախագծի շրջանակներում: Շնորհակալություն եմ հայտնում գործընկերներին՝ Համետ Մելքումյանին, Լիլի Հարությունյանին եւ Նինա Ստեփանյան-Ղանդիլյանին դաշտային աշխատանքներին եւ ազգագրական նյութի հավաքմանը մասնակցության համար, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ աշխատակիցներ Սուրեն Հոբոսյանին, Տորք Դալայանին, Համետ Մելքումյանին, Լիլի Մկրտումյանին եւ Հասմիկ Գալստյանին աշխատանքի գրաքննության եւ արժեքավոր խորհուրդների համար եւ, իհարկե, այս թեմային առնչվող նյութ տրամադրած մեր բոլոր բանասացների (Մամե Ամիրյան, Աննա Մարոյան եւ այլք, տե՛ս աղ. 1):

յանը նվիրված կամ տեղեկություններ պարունակող մի շարք աշխատություններ կան²: Անձրեւաբեր ծեսեր եւ անձրեւին առնչվող հավատալիքներ առկա են նաեւ տարածաշրջանի այլ երկրներում: Մասնավորապես ստորեւ քննարկվող «անձրեւի հարս» ծեսը տարբեր անուններով եւ տարբեր դրսեւորումներով առկա է հարավային, հարավարեւմտյան Ասիայից մինչեւ Եվրոպա ապրող ժողովուրդների մշակույթում³:

Կուրմանջիախոս ժողովուրդների մշակույթում, որոնց պատկանում են նաեւ եզդիները եւ քրդերը, եւս առկա են անձրեւաբեր ծեսեր եւ հավատալիքներ⁴: Այս ժողովուրդների կողմից երաշտի կամ տեւական անձրեւների ժամանակ կիրառված մի շարք անձրեւաբեր ու անձրեւախափան ծեսեր եւ հավատալիքներ է թվում Թոմաս Բուլան, ով ազգագրական նյութեր է հավաքել Թուրքիայի, Իրաքի եւ Իրանի կուրմանջիախոս բնակչության շրջանում: Նա նշում է հետեւյալ անձրեւաբեր եւ անձրեւախափան միջոցների մասին.

ա. Անձրեւի աղոթք անող դերվիշներին են խնդրում աղոթել:

բ. Կանայք գնում են աղբյուրի մոտ, միմյանց վրա ջուր են ցողում:

գ. Կանայք գետի հունը արորով վարում են:

դ. Կանայք զուգվում են, հագնում ամենագեղեցիկ զգեստները, վերցնում ճաշի պարագաները, գնում գյուղամերձ սուրբ ծառի մոտ կերակուր պատրաստում եւ մինչեւ ուտելիքի եփելը պարում դրա շուրջը: Ապա հաց ուտելուց հետո ամենագեղեցիկ զգեստով կնոջը ջրով ցողում են ու սպասում անձրեւի: Եթե մինչեւ վերադառնալու ժամը անձրեւ չի գալիս, նրանք միմյանց ջրում են ու թաց վերադառնում գյուղ:

ե. Կանայք ջրհորդանի տակ սնունդ են հավաքում եւ այդ ջրով ցողած՝ բաժանում աղքատներին:

² Տևս Թ. Նազարեանց, Նախապաշարմունք, հ. 1, Տիֆլիս, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան, 1878, 99 էջ, էջ 44-45. Ս. Դ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969. Վ. Հ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, 510 էջ. Ս. Ս. Մկրտչյան, Հայոց տոնածխական մշակույթ, Երևան, 2016, էջ 114-123. Մ. Արեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 89-91. Թ. Հայրապետյան, Անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ, ՊԲՀ, 2004, 3, էջ 217-227, եւ այլն:

³ Ամիտի տեղեկության համար տես I. Başgöz, Rain-Making Ceremonies in Turkey and Seasonal Festivals. "Journal of the American Oriental Society", Vol. 87, No. 3, 1967, p. 304-306. I. Başgöz, Rain Making Ceremonies in Iran, "Iranian Studies", Vol. 40, N. 3, 2007, էջ. 385-403. M.-H. Papoli Yazdi, A. Jalali, Rituals to Appease the Providence to Send Rain During Drought Periods, "The Circle of Ancient Iranian Studies" (Akhbar, Daily Newspaper, No. 54). Last accessed: 18.06.2016 (http://www.cais-soas.com/CAIS/Celebrations/drought_ritual.htm).

⁴ Տես T. Bois, Les Kurdes. Beyrouth, 1958. T. Bois, Connaissance des Kurdes, Beyrouth, 1965. I. Başgöz, 1967, 2007, նշվ. աշխ.:

զ. Հավատացյալ մարդու խորասուզում են ջրավազանում:

է. Փիրի գերեզմանից վերցրած քար են ջրի մեջ գցում՝ մինչեւ անձրեւ գա:

ը. Պարանի վրա յոթ կամ ինը հանգույցներ են անում՝ ճաղատ մարդկանց անուններ տալով, ապա պարանը նետում կրակի մեջ՝ ասելով. «Ես ճաղատին վառեցի, թող արեւն էլ ինձ վառի»:

թ. Քառասուն ճաղատների անուններով պարան են պատրաստում ու դնում ջրհորդանի վրա կամ քառասուն ճաղատների անուններ են գրում թղթի վրա ու կախում ծառից:

ժ. Բուկա քարանձ⁵. Թ. Բուան առավել մանրամասն կանգ է առնում «Բուկա բարանե» ծեսի վրա՝ որպես երեսանների կողմից իրականացվող արարողություն: Նա նշում է, որ երեսանները տիկնիկ՝ բուկա բարանե (անձրեւի հարս) են պատրաստում փայտերը խաչածեւ ամրացնելով, զգեստավորելով եւ գլխին գլխաշոր դնելով: Ապա երկու կողմից տիկնիկի թեւերը բռնած՝ խմբով գնում են տնետուն եւ երգում⁶. «Նուռ, մալմեյադ, / Աստված, անձրեւ գա, / Հիվանդների ու աղքատների համար, / Աստված, անձրեւ գա, / Գարնան ճաղատ գլուխ, / Օ՛ Անձրեւի Հարս, / Յանքերի վրա ջուր տուր, / Որպես անցած օրերի կերակուր»: Ամեն տանը տիկնիկի վրա մի դույլ ջուր են լցնում եւ երեսաններին քաղցրավենիք տալիս: Թ. Բուան նաեւ նշում է, որ երբ անձրեւը շատ է գալիս եւ բերքի փշանալու վտանգ կա, կատարվում է նույն արարողությունը, միայն երգի բառերն են ուրիշ⁷:

Հայաստանի եզդիների եւ քրդերի⁸՝ անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերը գիտական շրջանակներում քիչ են հայտնի եւ մասնակիորեն

⁵ Տնւ T. Bois, 1958, 1965, նշվ. աշխ.:

⁶ Երգի կուրմանցի տարբերակը բացակայում է, թարգմանած է ֆրանսերենից՝ բառացիորեն:

⁷ Տնւ T. Bois 1958, նշվ. աշխ., էջ 27-28. 1965, նշվ. աշխ., էջ 108-110:

⁸ Մենք աշխատել ենք եւ՝ եզդի, եւ՝ քուրդ էթնիկ ինքնությամբ քնակչության հետ:

Հայաստանում եզդի եւ քուրդ էթնիկ ինքնություններով քնակչությունը կուրմանցիախոս է եւ դավանում է եզդիականություն (կամ շարֆադին): Տնւ T. Dalalyan, Construction of Kurdish and Yezidi Identities among the Kurmanji-speaking Population of the Republic of Armenia, in: V. Voronkov, S. Khutsishvili, J. Horan (Eds.), "Changing Identities: Armenia, Azerbaijan, Georgia", Heinrich Böll Stiftung South Caucasus, 2011, p. 177-201. G.S. Asatrian, V. Arakelova, The Religion of the Peacock Angel: The Yezidis and Their Spirit World, London, 2014): Քուրդ էթնիկ ինքնությամբ ոչ մեծաթիվ (ՀՀ 2011 թ. մարդահամարի եւ քնակչության պայմանների հաշվառման արդյունքները. Բնակչությունը (քաղաքային, գյուղական) ըստ ազգության, սեռի եւ տարիքի, <http://armstat.am/file/doc/99478353.pdf>) քնակչությունը եւս առօրյա կյանքում ընդունում է եզդի անվանումը, սակայն որպես կրոնական խմբի պատկանելություն:

են քննարկվել⁹ (բացառություն են չեյիսերի եւ փիրերի կողմից անձրեւ կանչելու ծեսերը¹⁰ եւ, թերեւս, Գյալթո գյուղի հարեւանությունում գտնվող Գորտաքարի սրբավայրի ծեսը)¹¹:

Իր «Եզդի քրդերի հավատալիքները» գրքում (2006) Ամինե Ավդալը հակիրճ անդրադարձել է նաեւ «Բուկա բարանե» ծեսին: Նա նշում է, որ երաշտի ժամանակ անձրեւ առաջացնելու նպատակով եզդիները պատրաստում էին «բուկա բարանե», որը երեխաներից մեկը պահում էր ձեռքում, եւ երեխաների խումբը, դհուլի ու զուռնայի նվագակցությամբ, տնետուն անցնելով՝ շրջում էր գյուղում: Նրանք կանգնում էին ամեն տան առաջ, մի-մի աման ջուր լցնում տիկնիկի վրա, եւ երեխաներին յուզ, ձու, մրգեր կամ այլ սննդամթերք էին տալիս: Ա. Ավդալը նշում է նաեւ, որ այդ ընթացքում երեխաներից մեկը ասում էր հետեւյալը. «Բարան-բարան, բրբարա, / Խերե-բարաքյաթե բինա խարա, / Յա Մամա-ռաշ, բարանե բինա խարա», որը նա թարգմանում է. «Անձրեւ, անձրեւ, թափվիր, / Խեր, բարաքյաթ հետդ բեր, / Ով Մամառաշ (անձրեւի ոգի), անձրեւ տուր»: Նույն գրքի ուրիշ բաժնում Ավդալը նշում է, որ երեխաները երգում էին. «Հատիյա վրա բուկա բարանե, / Բրդըն հեկա, ջանե, ջանե, / Բրդըն պանե, ջանե, ջանե, / Բրդըն ոռն, ջանե, ջանե, / Բրդըն էմիշ, ջանե, ջանե, / Մամառաշ բրդա բարանե», որը թարգմանվում է. «Եկել է ջրահարսը, / Չու տվեք, ջանե, ջան, / Պանիր տվեք, ջանե, ջան, / Յուզ տվեք, ջանե, ջան, / Մրգեր տվեք, ջանե, ջան, / Մամառաշը ձեզ անձրեւ կտա»: Ծեսի վերջում երեխաները տիկնիկը նետում են գետի մեջ¹²: Անձրեւաբեր ծեսերից Ա. Ավդալը նաեւ նշում է, որ երաշտի ժամանակ անձրեւ բերելու նպատակով եզդի կանայք լծվել են արորներին¹³ կամ գետից քար են հանել եւ սպանված մարդու գերեզմանի վրա գցել: Պատահել է, որ շեյիսերը աղոթել են Մամառաշին եւ անձրեւ խնդրել (գ.

Նշենք, որ մեր հետազոտության նյութի առումով որեւէ տարբերություններ չեն գրանցվել եզդի եւ քուրդ էթնիկ ինքնություն ունեցող քնակչության միջեւ: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ սույն աշխատանքում հիմնականում օգտագործել են «եզդի» ընդհանուր անվանումը:

⁹ Տե՛ս Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 89-91. Ա. Ավդալ, Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 95-96, 75, 101, 121-122:

¹⁰ Տե՛ս G. Asatrian, V. Arakelova, The Yezidi Pantheon, Iran & the Caucasus, vol. 8, No. 2, 2004, p. 231-279. Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 122:

¹¹ Տե՛ս Վ. Բղոյան, Հողաբերքի եւ տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ, Երևան, 1947, էջ 305. Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 75, 101:

¹² Տե՛ս Ա. Ավդալ, Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 95-96, 121-122:

¹³ Տե՛ս Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 96: Այս ծեսը առկա է եղել նաեւ հայերի մեջ (տե՛ս Վ. Հ. Բղոյան, նշվ. աշխ., Թ. Հայրապետյան, նշվ. աշխ. եւ այլն):

Ալաբալա), երբեմն կանայք խմբով գնացել են աղբյուրի մոտ եւ միմյանց ջրել կամ խմբով լողացել են գետում (Հաչին)¹⁴:

Մեր գրանցած եւ ստորեւ ներկայացվող ազգագրական նյութերը լրացնում եւ նոր տվյալներով հարստացնում են կուրմանջիախոս ժողովուրդների «բուկա բարանե» ծեսի եւ անձրեւին առնչվող այլ ծեսերի մասին մեր գիտելիքները:

Հետազոտության նյութը եւ մեթոդները. Հետազոտության նյութը հավաքվել է խորացված կենսագրական հարցազրույցների, երբեմն նաեւ անձրեւաբեր ծեսերին վերաբերող հարցաշարի միջոցով: Սույն աշխատանքում փորձել ենք ընդհանուր գծերով նկարագրել «Բուկա բարանե» ծեսը կատարողներին, ծեսում օգտագործվող առարկաները եւ ծիսակարգը՝ հիմնվելով Արաբաժոտնի մարզի Կանչ (Գյալթո), Հակկո, Հացաշեն (Սաբունջի), Սորիկ, Մեծածոր (Ավթոնա, Սիչանլու), Օթեւան (Բայսըզ), Լուսական, Կանիաշիր, Ծարճակիս (Դերեկ), Կոտայքի մարզի Մայակովսկի, Սեւաբերդ, Զրվեթ, Արմավիրի մարզի Շենիկ, Մայիսյան, Մրգաշատ, Սարգարապատ, Ակնալիճ, Արարատի մարզի Մարմարաշեն, Մխչյան, Մրգավետ գյուղերի եւ Երեւանի (Արեշ թաղ.) բանասացների պատմությունների վրա (աղյուսակ 1): Հարցազրույցների մի մասը անց է կացվել Գեղաձորի, Նիգավանի (Արաբած լեռ), Սեւաբերդի (Ակնալիճ, Գեղամա լ.), Պայտասարի, Աթահակի եւ Հանքավանի շրջակայքերի բարձր լեռնային անասնապահական կայաններում: Անձրեւին առնչվող այլ ծեսերի մասին տեղեկություններ մեր կողմից ակամա գրանցվել են նաեւ Արաբաժոտնի, Արմավիրի, Արարատի եւ Կոտայքի մարզերի այլ գյուղերում (մենք եղել ենք չորս տասնյակից ավելի գյուղերում)՝ էթնոբոլոգիական հետազոտությունների ընթացքում:¹⁵

Մեզ չի հաջողվել անմիջականորեն մասնակցել որեւէ ծեսի. նյութը գրանցվել է այդ ծեսերի եւ այլ պրակտիկաների մասին բանասացների բանավոր պատմությունների հիման վրա: Բուն ծեսին մասնակցելու հնարավորություն չի եղել երկու պատճառով. ա) այդ ծեսերը, բացառությամբ մատաղներով ուղեկցվող որոշ դեպքերի, այլեւս հազվադեպ են կիրառ-

¹⁴ Տե՛ս Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 122:

¹⁵ Ամբողջական ցանկի եւ զուգահեռ կատարված այլ հետազոտությունների մանրամասների համար տե՛ս Ռ. Հովսեփյան, Ն. Ստեփանյան-Ղանդիլյան, Հ. Մելքումյան, Բուսաբույսական եւ բուսափալաքական գործունեությունները եզդիների եւ քրդերի մշակույթներում (նախնական տվյալներ), ՊԲՀ, թ. 3 (197), 2014, էջ 148-162. R. Hovsepyan, N. Stepanyan-Gandilyan, H. Melkumyan, L. Harutyunyan, Food as a marker for economy and part of identity: on traditional vegetal food of Yezidis and Kurds in Armenia, "Journal of Ethnic Foods", 3(1), 2016, p. 32-41.

վում եւ ք) դրանք կատարվում են իրավիճակին համապատասխան՝ ըստ անհրաժեշտության (երաշտ կամ տեւական տեղումներ): Պատմությունները սովորաբար կրկնվում են նույն գյուղի կամ ընտանիքի սահմաններում: Անձրեւաբեր ծեսերի եւ հավատալիքների հիմնական կրողը եղել են ընտանիքի տարեց անդամները, սակայն երբեմն երիտասարդները եւ միջին սերունդը եւս բավականաչափ տեղեկացված էին: Մասնավորապես «բուկա բարանեի» ծեսի մասին տեղեկության կրողները գերազանցապես ավագ սերնդի կանայք են: Հարցազրույցները երբեմն եղել են ընտանիքի բոլոր անդամների ներկայութեամբ կամ հարեւանների միջավայրում, որտեղ ավագի խոսքերը լրացվել են միջին սերնդի ներկայացուցիչների եւ երիտասարդների կողմից:

Աշխատանքում նկարագրվող ծեսերի համար սովորաբար տրվում են հղումներ, որոնք բացակայում են բոլորի կամ գրեթե բոլորի համար ընդհանուր, հայտնի տարբերակների համար՝ կրկնություններից խոսսափելու նպատակով: Տարբերակների մասին գրելիս սկզբում նշել ենք հիմնական տարբերակը, ապա՝ պակաս հաճախ ներկայացվողները: Մասնավոր եւ յուրահատուկ դեպքերի, ինչպես նաեւ հազվադեպ հանդիպող տարբերակների համար աղբյուրները հղվում են:

Հարազուրության արդյունքները եւ դրանց քննարկումը. Հայաստանում կուրմանջիախոս բնակչութունը կենտրոնացած է Արագած լեռան շրջակայքում, Արարատյան դաշտում, Գեղամա լեռներից արեւմուտք գտնվող բնակավայրերում: ՀՀ վերոհիշյալ գյուղական բնակավայրերի կուրմանջիախոս բնակչության շրջանում 2013-2016 թթ. անցկացված դաշտային հետազոտությունները «բացահայտեցին» եղանակին առնչվող եւ դրա կարգավորմանը միտված բազմազան հավատալիքներ ու ծեսեր (գորտին, թարմ խոտին, ջրին, կրակին, էջ լողացնելուն, մատաղին, հարս-տիկնիկին, ճաղատին լողացնելուն¹⁶, հոգեւորականի աղոթքին առնչվող եւն): Այդ հավատալիքներն ու ծեսերը հիմնականում նույնն են, ինչ արդեն հայտնի է հայերի համար¹⁷, իսկ որոշ դեպքերում դրանց զուգահեռներն (անալոգներն) են հանդիսանում: Անձրեւ կանչելու համար նշված անալոգիաներով գրեւորվող տարբերությունը թերեւս այն է, որ եզդիները քրիստոնեական քահանաների փոխարեն ունեն համանման գործառույթ

¹⁶ Բանասացը՝ Հացաշնցի կին, ընտանիքի անդամների մասնակցությամբ պատմում է՝ ինչպես է հարսը թոռան գլուխը սավրել, հետո լվացրել, որից հետո հորդառատ անձրեւ է եկել (150613-2a,b,c):

¹⁷ Տե՛ս Յ. Նազարեանց, նշվ. աշխ., էջ 44-45, Վ. Բդոյան, 1947, 1972, նշվ. աշխ., Թ. Հայրապետյան, նշվ. աշխ., Ս. Ս. Մկրտչյան, նշվ. աշխ., եւ այլն:

ուռնեցող սեփական հոգեւոր առաջնորդներ՝ շեյխեր եւ փրիւեր, իսկ քրիստոնեական եկեղեցու համանման¹⁸ գործառույթը կատարում են «սրբերի օջախները»՝ շեյխերի եւ փրիւերի տները:

Մեզ հայտնի չեն եզդիների՝ ստորեւ քննարկվող եղանակի կարգավորմանն առնչվող հավատալիքների եւ ծեսերի առաջացման ժամանակները եւ ակունքները: Դրանք հնարավոր չէ պարզել մասնավորապես եզդիների մոտ գրավոր աղբյուրների բացակայության, ինչպես նաեւ հայերեն կամ այլ լեզուներով այդ թեմային առնչվող վկայությունների բացակայության պատճառներով:

Ստորեւ ներկայացնում ենք մեր դաշտային ազգագրական գիտարշավների ընթացքում գրանցած նյութերը:

Բանասացները սովորաբար չէին կարեւորում այնպիսի հավատալիքները եւ «անճրեւաբեր» ծեսերը, ինչպիսիք են կրակի վրա ջուր լցնելը, թարմ խոտ կամ տերեւներ գցելը, անճրեւորդների վրա ջուր լցնելը¹⁹, գորտին տանջելը, սպանելը կամ պարզապես վրան ջուր լցնելը, ավանակի վրա ջուր լցնելը (բացառությամբ համայնքային միջոցառման վերածված տարբերակների, որոնք քննարկվում են այս աշխատանքում): Պատճառը, գուցե, դրանց արդեն խիստ «առօրեականացվածություն» է: Սակայն ավելի հաճույքով եւ ոգեւորությամբ պատմում էին մատաղներով եւ մեծ ընտանեկան- համայնքային մակարդակի տոնախմբություններով ուղեկցվող միջոցառումների մասին (դրանցից է, օրինակ, բուկա բարանեն. «Մենք հարսանիքի նման էինք անցկացնում էտ արարողությունը՝ դհուլ-գուռնով, զարդարում էինք մի հատ տիկնիկ ու սկսում էինք, ոնց որ հարս բերել: Դրա նման ուրախանում էինք, ըտենց շատ ուրախ ա անցել...»)²⁰: Նույն կերպ «առօրեականացված» անճրեւախափան հավատալիքներից եւ ծեսերից նշում են, օրինակ, սպանված մարդու գերեզմանից մի կտոր քար ջրի մեջ գցելը (150704-B1a²¹, նույն անուն ուռնեցող տղամարդկանց

¹⁸ Հայ առաքելական եկեղեցին ունի երաշտի դեպքում կատարվող աղոթք, որի նպատակը բերքին առատություն խնդրելն է, «իսկ կամքը թողնում են Աստծուն. եթե բերքի առատության համար անձրև է պետք, ապա Աստված այն տալիս է, իսկ եթե անձրև պետք չէ, Աստված է որոշում» (Qahana.am, 20.04.2016):

¹⁹ Այս պրակտիկայի մասին միայն Կանիաշի գյուղում պատմեցին (150704-B1b, c):

²⁰ Բանասացը՝ Մեծաձորցի միջինն անց տարիքի տղամարդ, վերապատմում էր Ղարսեցի մոր խոսքերը (150620-2a):

²¹ Թ. Բուսն եւս նշում է համանման հավատալիք, բայց սպանված մարդու փոխարեն նշում է փիղ (տե՛ս T. Bois, 1958, 1965, նշվ. աշխ.): Ա. Ավդալը նույնպես գրել է այս անճրեւաբեր ծեսի մասին՝ սպանված մարդու տարբերակով, սակայն լրիվ հակառակ ընթացքով, այսինքն՝ անձրև բերելու համար գետից քար են հանել ու տարել գցել սպանված մարդու գերեզմանի վրա: Ավդալը նաև գրում է, որ քարը գերեզմանին ձգելիս անձրև են կանչել

կողմից հողի մեջ երկաթե ցից խփելը (պարզեցրած տարբերակով, 150704-B1b) կամ «եթե ուժեղ անձրեւ ա, քամի, իրար հետ ա գալլամ, ... մի քիչ աղ մի քիչ ալյուր իրար հետ խառնում ես, ըսենց չպրտում ես, ասում ես՝ քամի առ էսի, էսի քո դսմաթ՝ գնա կայնի» (150614-Յձ, c):

Ilhan Başgöz-ը իր «Անձրեւաբեր ծեսերը Իրանում» (“Rain Making Ceremonies in Iran”) աշխատանքում, հիմնվելով Իրանի շրջաններից տարբեր ժամանակներում (Ի. դ.) եւ տարբեր ազգերի, ժողովուրդների մոտ տեղացի ազգագրագետների եւ իր հավաքած ազգագրական նյութերի հիման վրա, ի մի է բերել անձրեւին առնչվող ծեսերը եւ տվել դրանց դասակարգումը: Նա անձրեւի ծեսերը բաժանում է երկու հիմնական խմբերի՝ միանձնյա կատարվող եւ խմբային: Վերոնշյալ «առօրեականացված» անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերը, ըստ էության, համապատասխանում են Başgöz-ի առանձնացրած միանձնյա (անհատական մակարդակով) կատարվող ծեսերին: Այս հեղինակը եւս առավել մանրակրկիտ անդրադարձել է խմբակային մակարդակով կատարվող ծեսերին՝ խմբավորելով դրանք հետեւյալ տիպերում.

- ա. աղոթքով ու մատաղով ուղեկցվող ծիսակատարություններ,
- բ. տիկնիկով ծես²² (chomcha gelin),
- գ. ճաղատի ծես,
- դ. 40 ճաղատների անունով ծես,
- ե. խարույկի ծես,
- զ. անդամվեժք հավաքելու եւ աղքատներին բաժանելու ծես,
- է. կռվախաղերով ծեսեր²³:

Ստորեւ հակիրճ ներկայացնում ենք Հայաստանում կուրմանջիախոս բնակչության կողմից Ի. դարում եւ որոշ դեպքերում նաեւ մեր օրերում խմբային մակարդակով կատարվող անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերը: Առավել մանրամասն նկարագրվում է «բուկա բարանե»՝ անձրեւի հարս ծեսը:

Սրբերը, արսարեղիները (գիսարսրները) և անձրեւ. Անձրեւ առաջացնելու նպատակով կատարվող զոհաբերությունները (մատաղ), ըստ մեր դիտարկումների, կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղված ա) ժողովրդական սրբերին եւ բ) շեյխերի օջախների սրբերին: Ժողովրդական

և Մամաուշին խնդրել, որ անձրև տա. «Բարան ուարա, | Բարան ուարա, | Մամաուշ, բարանե բրդա» (տե՛ս Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 122):

²² Հեղինակը նշում է, որ այս ծեսը կատարվում է նաև հայերի և քրդերի կողմից (տե՛ս I. Başgöz 2007, էջ 395):

²³ Տե՛ս I. Başgöz, 2007, նշվ. աշխ.:

սրբերի ասելով նկատի ունենք հիմնականում ավանդական սրբատեղիները, որոնք եզդիները սովորաբար անվանում են զիարատ: «Ժողովրդական սրբատեղիները» հիմնականում տեղակայված են բնակատեղիներից դուրս, հաճախ սարերի գագաթներին, որտեղ եզդիները ամռանը տանում են իրենց կենդանիները: «Ժողովրդական սրբերը» կարող են տեղակայված լինել նաև բնակավայրերի շրջակայքում: Քարերից ու քարակերտ տարատեսակ կառույցներից բացի՝ այս զիարատները կարող են լինել հայկական մատուռներ, եկեղեցիներ, սուրբ աղբյուրներ, սուրբ ծառեր եւ այլն: «Ժողովրդական սրբերին» դիմում են ամենաբազմազան՝ ներառյալ անձրեւ բերելու եւ առատ բերք ապահովելու խնդրանքներով²⁴: Ժողովրդական սրբերին ուղղված զոհաբերությունները կատարվում են եւ՝ անմիջականորեն սրբատեղիի տարածքներում, որտեղ ժողովուրդը սովորաբար կառուցել է տաղավար եւ մորթված մատաղացու կենդանուն մշակելու ու եփելու հարմարություններ, եւ՝ բնակատեղիների ներսում՝ հեռակա կարգով (զոհաբերությունը կատարվում է տան բակում, բայց ուղղված է սարում գտնվող սրբին): Այսպիսի ծեսերը Հայաստանում ընդհանրական են բոլորի համար՝ անկախ ազգային եւ կրոնական պատկանելությունից:

Մամառաշան²⁵. «Ժողովրդական» սրբատեղիների մի մասը եզդիների կողմից վերագրվում են (իսկ այդ սրբատեղիներում կատարվող զոհաբերությունները հաճախ ուղղված են) Մամառաշ անունով սրբին (օգտագործվում են նաև Մամառաշան, Մամեռաշան տարբերակները, երբեմն «Մամե»-ն եւ «Ռաշ»/«Ռաշա»-ն առանձնացվում են, որտեղ «ռաշ»-ը թարգմանում են որպես «սեւ»): Եզդիների Մամառաշան սուրբը համարվում է կայծակի, ամպրոպի, անձրեւի եւ այլ օդերեւութաբանական երեւույթներ կառավարելու ընդունակ ոգի (բանասացները անվանում են նաև հրեշտակ, սուրբ եւ աստված տարբերակներով, «եղանակի աստված»): «Մամառաշանի ձեռն ա, հորությունն էլ իրա ձեռն ա, անձրեւ էլ, ամեն ինչ իրա ձեռն ա» (150704-B1a): Եզդիների մոտ ընդունված է անձրեւ բերելու կամ դադարեցնելու, լավ եղանակ տալու, ինչպես նաև կայծակից ու փոթորկից զերծ պահելու համար աղոթել եւ զոհ մատուցել Մա-

²⁴ Չնայած կարելի է դիտարկել որոշակի մասնագիտացումներ՝ ըստ գործառնությունների, օրինակ, Աժդահակ լեռան «կարմիր սարի» վրա գտնվող զիարատը «մասնագիտացած է» պտղաբերություն ապահովելու ուղղությամբ:

²⁵ Տե՛ս Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 121-122. G. Asatrian, V. Arakelova, 2004, նշվ. աշխ., էջ 234-242. Ph. G. Kreyenbroek, Yezidism-Its Background, Observances and Textual Tradition, Texts and Studies in Religion, vol. 62, Lewiston/Qweenston/Lampeter, p. 109-110.

մառաշանին: Բանասացների պատմելով՝ այդ լեռնային սրբատեղիներինց մի քանիսին պարբերաբար կայծակ է խփում: Պայտասարի մոտ (Աժդահակ)՝ ժամանակավոր անասնապահական կայանների հարեւանությամբ կա Մամառաշանին նվիրված սրբատեղի, որը կառուցվել է այդ վայրում մի եզդի պատանու կայծակից զոհվելուց հետո՝ ազգականների կողմից:

Շեյխերի և փիրերի օջախների սրբերը և անձրևը. Եզդիների շրջանում լայն տարածում ունի նաեւ անձրեւի խնդրանքով շեյխի (երբեմն նաեւ փիրի) «օջախի սրբի» համար մատաղ անելու պրակտիկան: Տիպական դեպքեր ենք գրանցել Ալադյազ (141004-4a), Զամչլու (140706-A2b) եւ Կանիաշիր (150704-B1a) գյուղերում (Արագածոտնի մարզ, Արագածի նախկին շրջան), ինչպես նաեւ Հակկո²⁶ գյուղում (Թալինի նախկին շրջան): Ալադյազ եւ Զամչլու գյուղերի շեյխերի սրբերին²⁷, որոնք նույն գերդաստանին են պատկանում, անձրեւ առաջացնելու հատկություն է վերագրվում²⁸: Չնայած այն հանգամանքին, որ որոշ շեյխերի սրբեր «մասնադիտացած» են անձրեւ բերելու ուղղությամբ, անձրեւի խնդրանքով մատաղով դիմել են (այժմ էլ դիմում են) ցանկացած շեյխի սրբի օջախի: Շեյխի կողմից իր «սրբի դեմը աղոթելուց» հետո շեյխի տանը եփել են զոհաբերված կենդանու միսը, իսկ ճաշկերույթին մասնակցել են բոլորը (սովորաբար ողջ գյուղը):

Բակային սրբարանները և անձրևը. Վերջին տասնամյակների ընթացքում երազ տեսնելու՝ կարծես թե դասական դարձած սցենարով սրբարաններ հայտնվում են նաեւ բնակատեղիների ներսում՝ բակերում²⁹: Դրանք երբեմն ժողովրդայնություն են վայելում, սակայն առավելապես՝ տվյալ երազ տեսնողի (որը սովորաբար տանտերն է կամ տանտիրուհին, երբեմն նաեւ ընտանիքի այլ անդամներ) գերդաստանի շրջանակներում, հատկապես եթե սրբարան կառուցողը մրիդ է: Տանտերերը ընդունելի են

²⁶ Շեյխ Ռաշիդը գաղթել է Ռուսաստան, սակայն համազյուղացիները մինչև էլ հիմա էլ այցելում են շեյխի կիսաբանդ տուն և մատաղ անում (մանրամասները տեքստում, Հավելված 7):

²⁷ Շեյխերը և իրենց օջախների սրբերը նույնացվում են:

²⁸ Բանասացները նշում են նաև խորհրդային շրջանում Շամիրամում անձրև կանչող փիրի մասին:

²⁹ Բակային սրբարանների երևույթը տարածաշրջանի ժողովուրդների, ներառյալ հայերի համար ընդհանրական է: Մանրամասների համար առաջարկում ենք կարդալ. H. Melkumyan, Informal Shrines and Social Transformations: The Murids as New Religious Mediators among Yezidis in Armenia (in press). Գ. Ստեփանյան, Իրականի և անիրականի սահմանագծին. «Տան սրբերի» հայտնվելու ձևերը տնեցիներին. Ավանդակաձևը և արդիականը հայոց մշակույթում. Հայաստանի ժողովրդական մշակույթը XVI, Երևան, 2014, էջ 249-257:

Համարում իրենց «բակային սրբարաններում» անձրեւի եւ լավ բերքի Համար մատաղ անելը³⁰:

«Բուկա բարանն» («Անձրեւի հարս») ծիսակատարութիւնը կարելի է համարել հայկական «Նուրի» անձրեւաբեր ծեսի³¹ հոմոլոգը, քանզի օգտագործվող առարկաները, միջոցառման մասնակիցների կազմը եւ ծիսակարգը հիմնականում նման են: Այս դեպքում եւս ծեսի գլխավոր գործող սուբյեկտի անվանումը օգտագործվում է նաեւ որպէս ծեսի անվանում: Քանի որ եզդիների «Անձրեւի հարս»-«Բուկա բարան» ծեսը գիտական հանրութեանը քիչ է հայտնի եւ մանրամասն նկարագրված չէ, ստորեւ դրան կանգնեցնենք առավել հանգամանալից՝ կատարելով ուղղակի մեջբերումներ բանասացների պատմութիւններէջ³²:

«Բուկա բարան»-ն որպէս անձրեւաբեր ծես. Հողագործութեամբ զբաղվող եզդիների շրջանում «Բուկա բարան»-ն սովորաբար հայտնի է որպէս անձրեւաբեր ծես, որը կատարում են անձրեւի սակավութեան, երաշտի ժամանակ, երբ բերքը վատ լինելու կամ կորցնելու վտանգ կա³³: «Բուկա բարան» ծեսի նախաձեռնութիւնը սովորաբար եղել է (մեր օրերում էլ լինում է) տարեց³⁴ կանանց կողմից (մեկ կամ մի քանի ընտանիքների), որոնց սովորաբար ծեսի ընթացքում միանում են նաեւ մյուսները: Ծեսի նախապատրաստութիւնը՝ «Բուկա բարան» տիկնիկի պատրաստումը (զարգարումը), եւս սովորաբար տարեց կանայք են անում: Ծեսի հիմնական կատարողները համուսնացած աղջիկներն ու երեխաներն են եղել (տիկնիկը գլուղում ման տալը, արտասանելը, երգն ու պարը, սնունդ եւ փող հավաքելը), սակայն կարող էին մասնակցել նաեւ ամուրի տարեց կանայք, ինչպէս նաեւ տղա երեխաները, պատանիները: Երիտասարդ-

³⁰ Սրբերի եւ մատաղների թեմային Համետ Մելքումյանի հետ մանրամասն անդրադառնալու ենք առանձին հոդվածով:

³¹ Տե՛ս Ս. Ս. Մկրտչյան, նշվ. աշխ. Վ. Հ. Բդոյան, 1972, նշվ. աշխ. Թ. Հայրապետյան, նշվ. աշխ., եւ այլն:

³² Մեջբերումներում եւ հավելվածով ներկայացվող պատմություններում հանվել են մեր հարցերը եւ գրուցակցի կրկնողությունները, երբեմն նախադասությունները վերադասավորվել են տվյալ պատմության ժամանակագրական հերթականությամբ, սակայն բանասացի բառապաշարը, ոճը եւ արտասանությունը գրեթէ չեն փոփոխվել:

³³ Կարելու է նշել, որ եզդիների եւ քրդերի մոտ «Բուկա բարան» ծեսը միշտ չէ, որ կապված է հողագործության հետ. գրառել ենք պատմություններ, երբ այս ծեսը իրականացրել են հեռագնա կիսաքոչվոր անասնապահները՝ լեռներում (մանրամասները՝ հետագայ տեսություն):

³⁴ Սովորաբար տարեց կանանց՝ նախաձեռնող հանդիսանալու երեւոյթը հավանաբար կապված է նրանց ավանդապահության, ծեսի մասին գիտելիքների եւ փորձի առկայության հետ:

ներն ու երեխաները երբեմն մասնակցել են նաեւ տիկնիկի եւ Հավաքած սննդամթերքով ուտեստներ-ճաշերի պատրաստմանը:

Անձրեւաբեր ծեսերում օգտագործված «Բուկա բարանե» տիկնիկը որոշակի տարբերություններ է ունեցել անձրեւախափան ծեսին օգտագործվողից: Հիմնական տարբերությունը թերեւս այն է, որ անձրեւաբեր «Բուկա բարանե» եղել է (եւ ներկայումս էլ պատրաստում են) ավելի մեծ եւ զարդարված՝ Հավանաբար տոնախմբություն-ծեսի ժամանակ տեսողական ավելի տպավորիչ ազդեցություն թողնելու նպատակով: Տիկնիկը սարքում են երկու՝ խաչաձեւ ամրացրած (կապված) ավելներից, փայտերից կամ մետաղական ձողերից (բոլոր հնարավոր համադրություններով), որի վրա շոր են հագցնում կամ փաթաթում: Որոշ բանասացներ առանձնահատուկ նշում են տիկնիկին գլխաշոր դնելու մասին (օրինակ՝ 160802-2d): Ըստ բանասացներից մեկի՝ «Բուկա բարանե»-ի շորը պետք է պատրաստված լինի յոթ տներից բերված յոթ գույնի կտորներից (150704-B1b, Հավանաբար ծիածանի գույները նմանակելու համար³⁵):

Տիկնիկը³⁶ ման տվող երեխաները շրջում են տնետուն եւ երգում կամ արտասանում: Մի քանի տասնյակ բանասացներից միայն մի քանիսը կարողացան լուր մասնակիորեն վերարտադրել՝ ինչ էին արտասանում-երգում «Բուկա բարանե»-ի ժամանակ. «Բարանե՛, բրբա՛ր, բրբա՛ր, ճվիկե նանե տա խար (Baranê bibar bibar çivîkê nanê te xwar)», իրենց իսկ թարգմանությունը. «Անձրեւ՛, անձրեւ՛, արի՛, արի՛, ճնճողկները քո հացը կերան» (150620-3a, 4a), կամ «Բե՛ բարանե, բրբա՛ր, բրբա՛ր, իդի բասը դա բրբարը, ջուջուկե նանե տա խար (Bê baranê bibar bibar îdî bese de bibar, cûcûkê nanê te xwar)», բանասացի մեկնաբանությամբ՝ «...Քո հացը կերան, ճնճողներն էլ եկան քո հացը կերան...» եւ «Բարանե՛, դա տը բրբարա՛, ճվիկե նանե տա խարե... (Baranê de bibarê çivîkê nanê te xwarê)», այսինքն՝ «Բու բարանե բը բարե»՝ «Անձրեւ արի, քո հացը արդեն կերան, չոլը մնաց՝ ճնճողները տարան...» (150604-4a): Մեկ այլ բանասաց հիշեց «Բուկա բարանե»-ի ժամանակ արտասանվող խոսքերի բովանդակային մասը. «Բուկա բարանե դըզարինը բալքի խադե ուն բըկը, բարան բե՛ բալքի

³⁵ Քրդերը, օրինակ, «Բուկա բարանե» կոչում են եւ՝ ստորեւ նկարագրվող տիկնիկին համանման համատեքստում (en.wikipedia.org/wiki/Bûka_baranê), եւ՝ ծիածանին (bukabarane.com):

³⁶ Հացաշնչի մի կին բանասացի պատմելով՝ Թալինի Զվատան գյուղում «բուկա բարանե»-ները բազմակի են եղել. «Բուկա բարանե, բուկա բարանե... մենք էլ փոքր վախտ, հիշում եմ, որ Զվատանում ամեն մեկին մի հատ ավել էին տալի իրա ձեռք, գյուղում պտտացնում էին, հետո... անպայման այլուր էին հավքում, ինչքան տուն եղներ, պտի էքան այլուր տար ու յուղ, տանեին հավա սարքին՝ բաժնեին երեխեքին...» (150613-3a):

ռըսխե բառա հեսիրա մաջա հադե (*Bûka baranê digêrîne belkî Xwadê Rem bike baran be, belkî riskê bela hêsira merîa heve*)»՝ «Բուկա բարանե ման ենք դալըմ, որ անձրեւ իգա, Աստված ուն մենա (ողորմա) մեզի, որ մեզի փրգե՝ անձրեւ մի գա, ցանքը հասնի, մենք մեր ցանքերը հավաքենք, որ ապրենք, յուր էրթանք» (160625-2a): Մեկ այլ տարբերակով. «Սելը, սալը բուկաբար»՝ «Տարին լավ էղնի, բերքառատ էղնի» (150613-2b): Մյուս բանասացները չկարողացան հիշել կոնկրետ խոսքերը (««Դուլի, դուլի, դան գե», ըտենց բան... չեմ հիշում, ես էլ եմ մոռացել...», 160804-3a): Միայն նշեցին, որ երգով խնդրում էին՝ անձրեւ գա, եւ երգի մեջ «Բուկա բարանե»-ն էր պարբերաբար կրկնվում... Յուրաքանչյուր բախում տանտերերը նրանց որոշ սննդամթերք՝ ձու, յուղ, կաթ, մածուն, պանիր, հաց, ալյուր, բրինձ, քաղցրավենիք, միրգ կամ փող (ընդհանրացված՝ «մաչ» (150613-2a,b,c) են տվել եւ ջուր լցրել տիկնիկի վրա:

Արարողության վերջում հավաքված սննդամթերքով տարբեր ուտեստներ (ներառյալ կաթնով կամ հալվա) էին պատրաստում եւ միասին ուտում կամ բաժանում բոլորին: Մեկ այլ վարկածով էլ հավաքված սննդամթերքը տվել են աղքատներին³⁷:

Միմյանց հակասելու աստիճան տարբեր վարկածներ կան «Բուկա բարանե»-ի ծեսի ավարտական մասի վերաբերյալ: Ըստ առաջին վարկածի՝ անձրեւ առաջացնելու համար «Բուկա բարանեն» պետք է գցելին ջուրը (Հավելած 1, 150614-2a), ըստ երկրորդ վարկածի՝ թաղելին եւ վրան էլի ջուր լցնելին (160625-2a), երրորդ վարկածով՝ նախորդ ծեսի ժամանակ թաղած «Բուկա բարանեն» հանելին ու գցելին ջուրը (150704-B1b, 150620-4a, 5a, 5b), մեկ այլ վարկածով էլ (հնարավոր է շփոթմունք լինի)՝ պարզապես թաղելին: Երբեմն բանասացները ասում են, որ ծեսի ավարտին տիկնիկը ոչինչ էլ չեն անում (150614-3a, c), իսկ Ճարձակիսում պատմեցին, որ ծեսից հետո բարձրացրել ու թողել են գյուղի դիմացի լանջին մինչեւ անձրեւ գա (150704-A1c): Անձրեւաբեր ծեսի ավարտին «Բուկա բարանեն» ջուրը գցելու եւ ջրի մասնակցութեամբ մյուս տարբերակները ակներեւաբար գերակշռում են (այն դեպքում երբ պարզապես թաղելու տարբերակը գրեթե միշտ բանասացների կողմից ասվել է կասկածանքով. «Թաղում

³⁷ «Մի հատ փեղը կամ քանի չոլի-մուլի հավաքում էին, շոր-մոր հագցնում էին, ասում են բուկա բարանե: Երեխեքը՝ տղա, աղջիկ, տանում էին, գյուղը՝ օրի մեջը մասն էին տալում, բանացնում էին: Ասում էին բուկա բարանե ա, օրշնեք: Երեխեքը ասում էին. «բուկա բարանե, բուկա բարանե, ...», յուղ-մուղ հավաքում էին, տանում էին մի քյասիքի էին տալիս: Ընդոք էլ իրանց համար հավիլա անելին, ճաշ անելին...» (160805-1c):

էին կամ ջուրն էին քցում, չեմ հիշում...)»³⁸: Ըստ պատմողների՝ այդ ծեսից առնվազն մի քանի օր հետո անձրեւ էր գալիս:

Կուրմանջիախոս բնակչության մեջ «Բուկա բարանե»-ի ծեսը բոլոր դեպքերում չէ, որ առնչություն է ունեցել հողագործության հետ: Տեղումների պակասից կամ առատությունից կարող էին տուժել նաեւ վայրի բույսերը, արոտավայրերն ընդհանրապես եւ հետեւաբար նաեւ՝ հեռագնա անասնապահների՝ լեռներում արածող կենդանիների հոտերը. «Ես որ փոքր էի, փոքր ժամանակ սար էինք մենք շատ բարձրանում, հերանքս Աղմաղանի սար (Աժդահակ) էին էթում: Առաջ, որ չէր գալի անձրեւ, իմ տատը ասում էր՝ հեղեք բուկաբարանե Ֆուցրեք: Անում էինք, իրանք էլ ինչքան օբա՝ տաս մարդ չադրերի մեջ, հավաքում էին իրանց լրիվ կաթերը տալւմ էին մեզի, բրինձ՝ տոպրակներով: Տալիս էինք էտ, մեծերը կաթնով էին եփում, սաղ գյուղը գալւմ ուտում էր: Էտ բուկաբարանեն էր: Հա, անձրեւը գալւմ էր, եթե շատ էր գալւմ՝ ձանձրանում էին, ասում էին գնացեք էտ բուկա բարանեն հանեք, էթում էինք հանւմ էինք նորից» (150605-1a):

«Բուկա բարանե»-ն որպէս անձրեւախափան ծես. Այն դեպքերի համար, երբ անձրեւները շատ էին լինում, խանգարում էին վարուցանքին, բերքահավաքին կամ անասնապահությանը, գոյություն է ունեցել անձրեւը դադարեցնելուն ուղղված ծես՝ կրկին «Բուկա բարանե»-ի մասնակցությունը: Անձրեւախափան բուկա բարանեի պարզ դեպքերում՝ որպէս նախորդ՝ անձրեւաբեր ծեսի շարունակություն, երբ անձրեւը շատ է եկել ու չի կտրվել, գնացել եւ «Բուկա բարանեն» հանել են ջրից կամ հողից, եթե թաղել էին: Սակայն դեպքերի մեծամասնությունում, ի տարբերություն անձրեւ կանչելու ծեսի, երբ «Բուկա բարանե»-ին փորձում են սիրաչահել, անձրեւախափան ծեսի ժամանակ հակառակն են արել: Մեր կողմից գրանցված տարբերակներում, որպէս անձրեւախափան ծես, գերակշռում է թաղման արարողության նմանակումը. ողբալով³⁹ բուկա բարանեին թաղում են, հոգեհացի համար մթերք են հավաքում եւ հոգեհաց են

³⁸ Պարզապես թաղելու տարբերակը «Բուկա բարանե»-ի անձրեւական ծեսում հնարավոր է շփոթմունք է, որովհետեւ այդ տարբերակը գերազանցապես նշվում է որպէս «Բուկա բարանե»-ի անձրեւախափան ծեսի ավարտ:

³⁹ Բանասացը՝ երիտասարդ տղամարդ, պատմում է իր մանկական հիշողությունները. «Տատս էտ տիկնիկը սարքեց, ասեց լացելով տարեք թաղեք» (160809-1a): Բանասացը՝ միջին տարիքի կին, լրացնելով հարեւանուհու պատմությունը, պատմում է. «Քսան-նոսուն տարի առաջ [էր, որ բուկա բարանե էինք անում]: Մենք էլ որ փոքր էինք, էթում էինք սար, էթում էինք Աղմաղանի սարը, ըդեղ մենք էլ էինք երեխերով հավաքվում [բուկա բարանեի համար]... Մեծերը ասում էին՝ երեխերն էլ լսում էին. հեղում

տալիս: «Հոգեհաց»-ի համար սննդամթերքը սովորաբար հավաքում են «Բուկա բարանե»-ին թաղելուց հետո (160811-2e): Ամենատարածված տարբերակը հալվա սարքելն ու բաժանելն է եղել: Պարտադիր պայման է եղել «Բուկա բարանե» չոր տեղ թաղելը: «Գցում ենք ջրի մեջ, որ անձրեւ գա: Եթե որ չես ուզում անձրեւ գա, պտի չոր տեղը թաղես: Գետնի տակը պտի ընի, ըննեց տեղ թաղես, որ ջուր չընգնի իրա վրեն: Էտ փոքրը՝ սարը, մեծական եմ տեսե...» (150605-1a): Հաճախ նշում են, որ մեծ քարի տակ էին թաղում (160804-3b, a), ոմանք նշել են, որ անպայման պետք է մաքուր եւ պաշտպանված տեղ լիներ, որտեղ կենդանու ոտք չի դիպել⁴⁰ (160809-1a, 160805-1c, a), ոմանք էլ նշում էին, որ քարանձավում էին թաղում (160801-1a):

«Բուկա բարանե»-ի ծեսի այս՝ համեմատաբար պարզ անձրեւախափան տարբերակը առավել տարածված է այն ընտանիքների սահմաններում, որտեղ ավանդաբար զբաղվել են ոչխարաբուծությամբ եւ ամռանը քոչել են սարեր (օրինակ՝ 160801-1a, 160804-3a, 3b, 160805-1a, 1c, 2a, 2b, 4a, 4b, 6a, 160809-1a, 2a, 160810-B1abcde, 160811-1a, 1b, 2a, 2c, 2d, 2e): Բարձրեռնային անասնապահական կայաններում անցկացրած հարցազրույցները (աղ. 1) ցույց տվեցին, որ սերնդեսերունդ կիսաքոչվոր անասնապահական կենցաղով ապրած ընտանիքներում բանասացները «Բուկա բարանե» ասելով՝ առաջին հերթին տիկնիկը պատրաստելու ու չոր տեղ թաղելու անձրեւախափան ծեսը ի նկատի ունեն եւ հիմնականում սարում են արել այդ ծեսը: Այսպիսի դեպքերում բանասացները երբեմն ընդհանրապես չէին էլ լսել «Բուկա բարանե»-ի՝ անձրեւաբեր ծես լինելու մասին եւ որպես անձրեւաբեր ծես՝ նշում էին «էշ լողացնել»-ը (160805-6a, 160811-2d):

Ինչպես արդեն նշվեց, անձրեւախափան ծեսի համար օգտագործվող «Բուկա բարանե» տիկնիկը տարբերվում է անձրեւաբեր տիկնիկից. այն չափերով ավելի փոքր է եւ պարզ կառուցվածքով, մոտ քսան սմ չափերով փայտի (կամ երկաթի) կտոր է՝ փաթաթած մի կտոր շորի մեջ: Երբեմն այդ փայտի կտորի եզրին կոճակ են ամրացրել՝ գլուխն ու դեմքը նմանակելու համար⁴¹ (160805-6a, 160811-2d): Որոշ բանասացների պատմելով՝

էին բուկա բարանեն տանում էին, թաղում էին, [վրաններից ուտելիքը] հավաքում էին, նստում էին, ուտում էին, լացում էին...» (160811-2e):

⁴⁰ «Որ շատ անձրեւ էր գալում, էն ժամանակ մե հատ կուկլայի պես սարքում էին, տանում էին, ասում էին էսի պիտի տանեն չոր տեղը թաղեն, որ անձրեւ չգա: Մեծ քարերի մեջ պահում էին, որ ոտերի տակ, անասունի ոտերի տակ չընկնի» (160805-1c, a):

⁴¹ «Տիկնիկը մի հատ փեղ ա, մի հատ կոճակ խլիվում են՝ էս իրա գլուխն ա, մի հատ փեղ քերում են՝ էս էլ իրա թեւերն ա, շորով փաթաթում են, տանում, թաղում են: Մենք մի շոր

անձրեւախափան «Բուկա բարանե»-ի շորը պետք է «յոթ» տնից բերած կտորներից բաղկացած լիներ եւ արեւ տեսած չլիներ (160805-4b, a):

«Բուկա բարանե»-ն եւ մյուս անձրեւաբեր կամ անձրեւախափան ծեսերը Հետաքրքրական երեւույթ է «Բուկա բարանե»-ի ծեսի համակցումները այլ անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերի հետ: Գրանցել ենք համակցումների հինգ հիմնական տարբերակներ:

1. «Բուկա բարանե» - էշ լողացնել⁴²: Էշին լողացնելը եզդիների մոտ ամենատարածված անձրեւաբեր ծեսերից է: Ցայսօր գրանցել ենք «Բուկա բարանե»-ի ծեսի եւ էշ լողացնելու ծեսի «դասական» տարբերակների հետեւյալ «միախառնված-անցումային» ենթատարբերակները:

ա. «Բուկա բարանե» ծեսի «դասական» տարբերակը՝ երեխաները տիկնիկը ման են տալիս գյուղում («Բուկա բարանե = տիկնիկ, էշը չկա» բանաձեւով, օրինակ՝ հավելված 1):

բ. Աղջիկ, երբեմն նաեւ տղա երեխաները, առանց հատուկ զգեստավորման, «Բուկա բարանե» էշով ման են տալիս գյուղում («Բուկա բարանե = տիկնիկ, էշը կա», հավելվածներ 2, 3):

գ. Միաժամանակ եւ՝ «Բուկա բարանե» են պատրաստում, եւ՝ երեխային են «հարսի» շորեր հագցնում⁴³ («Բուկա բարանե = տիկնիկ եւ երեխա, էշը կա»):

դ. «Բուկա բարանե» որպես տիկնիկ՝ չկա. այն փոխարինված է սովորաբար «հարսի» շորեր հագած աղջիկ կամ երբեմն տղա երեխայով, որին էշի վրա նստեցրած ման են տալիս գյուղում («Բուկա բարանե = երեխա, էշը կա»)⁴⁴:

ե. «Բուկա բարանե» որպես տիկնիկ կամ որպես «հարսի» պես զգեստավորված երեխա չկա: Էշի գլխին շոր էին գցում՝ հարսի նմանակելու համար («Բուկա բարանե = էշ, տիկնիկը չկա», օրինակ՝ 160811-2d):

են ճղում, եզիական շոր՝ մի հատ դեյրա դեմը, մի հատ հետեւը կապում են, տանում, թաղում...» (160811-2d):

⁴² Նաեւ գրանցել ենք Հացաշենում գյուղի շեյխի կողմից էշին լողացնելու մի պատմություն. «Ստեղ (Հացաշենում) էլ մի տարի անձրեւ չկար, շեյխը բռնեց էշին բերեց բուկաբարանե, ցրեց, անձրեւ եկավ...» (150613-3a):

⁴³ Մի դեպքում բանասացը նշում է եւ՝ միաձուլված, եւ՝ առանձին-առանձին տարբերակները (150620-5a):

⁴⁴ Տարեց տղամարդ Գյալթո գյուղից. «[Եթե] անձրեւ չէր գալիս, մի տղա երեխոյ նստացնում էին էշի վրեն, շորը հագցնում էին հարսի նման, ըսենց ման են գալի [գյուղում], ջուրը լցնում են գլխին, էտ ձեռի ք բուկաբարանեն, ուրիշ ձեռի չկա...» (150603-2a):

զ. Էշ լողացնելու ծեսի «դասական» տարբերակի ժամանակ երեխաների մասնակցությունը պարտադիր է⁴⁵:

Նշվող տարբերակներից երեւում է, որ «Բուկա բարանե»-ի՝ անձրեւի հարսի դերակատարությունը տիկնիկից բացի կարող է տարածվել կամ ամբողջությամբ անցնել երեխային կամ ավանակին:

2. Անձրեւախափան «Բուկա բարանե» ծեսի եւ նույն նպատակով երկու նույնանուն մարդկանց կողմից հողի մեջ երկաթե ցից խփելու ծեսի համակցության դեպքում երկու նույն անունն ունեցող տղամարդիկ (երբեմն կանայք)⁴⁶, «Բուկա բարանեն» մեջտեղ առած, մեկը մյուսին դիմելով, երգելով պետք է տանելն ու թաղելն (հավելված 5): Այս դեպքում «Բուկա բարանե» խոշոր տիկնիկի եւ ոչ մեծ երկաթե ցցի «դասական» տարբերակների միախառնումը՝ հիբրիդը, ստացվում է շորով փաթաթած երկաթի, ավելի հաճախ՝ փայտի ոչ մեծ կտոր: Այս ծեսի ընթացքը տարբեր գյուղերում որոշ չափով զանազանվում է: Օրինակ՝ Շենիկում նշեցին, որ տիկնիկին երգելով տանելու ընթացքում նրան պետք է անընդհատ ծեծեն (150406-1a): Կանխաշիրում եւս նկարագրեցին համանման տարբերակ (150704-B1b, c): Մեծածորում՝ «Բուկա բարանե»-ին տանելիս երգելու ընթացքում տղամարդիկ, մեկը մյուսին անունով դիմելուց զատ, ցիցը («Բուկա բարանեն» եւ ցիցը այս դեպքում նույնացվել են) կապելու մասին էին ասում, հետո կապում էին, թաղում, ապա գլխավերելում աղոթում (150620-5a, 4a, 5b): Օթեւանում՝ մի կտոր փայտ կամ երկաթե ցից են դրել գետինն եւ հերթով խփել. «Իմ անուն՝ A, քո անուն՝ A, ցիցը զարգենք՝ ամբերը բացվի, ամբերը փախնին», երբեմն այնպես, որ մեխվի: Ապա, որպես այս ծեսի շարունակություն կամ ենթատարբերակ, գետինը փորել են, ցիցը փաթաթել շորի մեջ՝ իբրեւ տիկնիկ-հարս է, եւ թաղել (հավելված 5): Նկարագրվող բոլոր տարբերակներում, թաղելուց հետո վերադարձել են տուն եւ «խեր են տվել» (հոգեհաց) «Բուկա բարանե»-ի համար՝ հավիա են պատրաստել ու բաժանել տներուն (150704-B1b, c, 160805-6a, 160801-1a եւ այլն):

3ա. «Բուկա բարանե» ծեսի եւ շեյխի օջախին աղոթելու, մատաղ անելու, շեյխի անձրեւաբեր աղոթքի միաձուլումը: Ե՛ւ անձրեւաբեր, ե՛ւ

⁴⁵ Սակայն Հացաշնում, մի ընտանիքում նշեցին, որ էշին պետք է երեխաները լողացնեն, ցանկալի է աղջիկները (150613-2b,a,c), ինչը եւս կարելի է դիտարկել որպես «միախառնված-անցումային» ենթատարբերակ:

⁴⁶ Այս տարբերակը պատմողների մեծ մասը նշում է, որ «Բուկա բարանեն» թաղողները պետք է լինեն նույնանուն տղամարդիկ կամ կանայք, բայց մի դեպքում նշեցին (150704-B1c, b), որ կույս աղջիկներ պետք է լինեն:

անձրեւախափան «Բուկա բարանե» ծեսերը հաճախ ուղեկցվել են կամ ավարտվել են նաեւ կենդանիների (խոշոր եւ մանր եղջերավոր անասուններ, աքլոր) զոհաբերութեամբ՝ մատաղով: Որոշ եզդիներ պարտադիր են համարում «բուկա բարանե»-ին զուգահեռ կենդանի մատաղ անելը: Որոշ «միաձուլված» դեպքերի համար երբեմն մատաղը այս ծեսի արարողութեան մասն էին համարում, այլ զուգահեռ կատարվող արարողութեւն (օրինակ՝ «էտի հատուկ պտի գնաս, սրբի դեմ աղաչես աստծուն, մատաղ անես, որ անձրեւ գա, էտ ուրիշ բան ա», 150613-2b): Մատաղի տեղը եւ հասցեատեղը գյուղերում հիմնականում շեյխերի օջախներն են: Համակցված ծիսակատարութեան ժամանակ («Բուկա բարանե» + շեյխի աղոթք + կենդանու զոհաբերութեւն) երբեմն «Բուկա բարանե» գյուղում ման տալուց հետո բերել են սրբի օջախ, որտեղ շեյխը աղոթել է տիկնիկի վրա, ապա այն թողել են սրբի մոտ (150620-2a): Նշենք, որ հակադարձ պարտադիր կապ չենք գրանցել՝ շեյխերի օջախներին եւ այլ սրբերին անձրեւի համար տրվող մատաղները պարտադիր չէ՝ ուղեկցվեն բուկաբարանեի ծեսով:

3բ. «Բուկա բարանե» ծեսի եւ Մամառաշանի համար աղոթելու եւ մատաղ անելու միաձուլումը⁴⁷: Թեեւ Ա. Ավդալը նշում է, որ «Բուկա բարանե» ծեսի ժամանակ տրվել է նաեւ անձրեւի ոգու՝ Մամառաշի անունը, մեր բանասացների մեծամասնութեւնը դրանք առանձին-առանձին էին ներկայացնում: Սակայն գրանցել ենք նաեւ դեպքեր, երբ «Բուկա բարանե» եւ Մամառաշանը նույնացվում են (հավելված 6):

3գ. Առանձին կատարվող ծեսերի՝ «Բուկա բարանե»-ի, շեյխերի օջախների սրբերին եւ Մամառաշանին աղոթելու եւ նրանց համար մատաղ անելու ծեսերի միաձուլումը: Այս տարբերակի տիպական օրինակ ենք գրանցել Հակոբ գյուղում, որտեղ վերոնշյալ ծեսը զուգորդվում է գյուղի շեյխի օջախի մոտ սրբի օջախի եւ Մամառաշանի համար մատաղ անելով ու աղոթելով, որը կերուխումով ուղեկցվող գյուղական մասշտաբի համայնքային միջոցառում է (160802-2d,a,e, հավելված 7):

Հոգվածում քննարկվող ծեսերը մեր օրերում եւ նախորդ դարում հանդես են գալիս եւ՝ պարզ, «մաքուր», եւ՝ համակցված, «միախառնված» տարբերակներով: Հավանական է, որ ի սկզբանե պարզ տարբերակով հանդես եկող ծեսերը ժամանակի ընթացքում միախառնվել են⁴⁸,

⁴⁷ Այս ենթատարբերակը ներկայացված է նաեւ Ա. Ավդալի կողմից (տե՛ս Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 95-96):

⁴⁸ Հավանաբար մոտաւայր եւ շփոթելը եւս իրենց դերն են ունեցել պարզ տարբերակների միախառնման գործում, ինչը դիտարկվում է մեր օրերում:

սկիզբ դրել համակցված տարբերակների եւ հետզհետե դարձել ավանդական: Սակայն չենք բացառում նաեւ հակառակ տարբերակը, այսինքն, որ այդ համակցված տարբերակները նախապես միասին են եղել, իսկ «անխառն», «պարզ» տարբերակները առաջացել են ժամանակի ընթացքում՝ համակցված տարբերակների տրոհման ու պարզեցման արդյունքում:

Շատ գյուղերում մեզ պատմել են, որ բուկա բարանե ծեսը իրենց մոտ վերջին անգամ կատարվել է տասնամյակներ առաջ՝ խորհրդային շրջանում, եւ տարեց շատ մարդկանց համար դրանք մանկական շրջանի հիշողություններ են: Սակայն Արագածոտնի մարզի Թալինի եւ Արագածի նախկին շրջանների կուրմանջիախոս գյուղերում, ինչպես նաեւ բարձրեռնային անասնապահական կայաններում այդ ավանդույթը կարծես թե դեռ պահպանվել է: Օրինակ՝ Կանչ⁴⁹ (Գյալթո), Հակկո, Հացաչեն (Սաբունջի), Սորիկ եւ Օթեւան (Բայազ) գյուղերում նեցին, որ այդ ծեսը գյուղում «միշտ» էլ անում են, իսկ վերջերս կատարել են հենց այս տարի (Կանչ), նախորդ մի քանի տարիների ընթացքում (Գյալթո, Հակկո, Հացաչեն, Սորիկ, Կանիաշիր եւ այլն), ինչպես նաեւ արել են ե՛ւ 80-ական, ե՛ւ 90-ական թվականներին եւ դրանից առաջ՝ խորհրդային շրջանում:

Եզդիների՝ անձրեւին առնչվող հավատալիքների եւ ծեսերի դասակարգման փորձ. Անձրեւաբեր ծեսերի Başgöz-ի կողմից տրվող դասակարգման հիմքում ընկած են հետեւյալ չափորոշիչները՝ ծեսի բնույթը, մասշտաբները (անհատական եւ խմբակային), արարողությունների հերթականությունը եւ ծեսի անունը, որը, ինչպես հեղինակն է նշում, ծեսի հիմնական գործող անձի (կամ առարկայի կամ նրա (դրա) դերակատարի) անունն է: Իր աշխատանքում, դասակարգելով, խմբավորելով անձրեւին առնչվող ծեսերը, Başgöz-ը փորձել է տալ հնարավորին չափ համապարփակ վերլուծություն ծեսերի յուրաքանչյուր խմբի համար⁵⁰:

Հայաստանի եզդիների՝ անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերի օրինակով փորձել ենք տալ անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերի այլ (մասամբ տարբերվող) մեկնաբանություն եւ դասակարգել դրանք ըստ ստորեւ բերվող չափորոշիչների:

1. Միջնորդները եւ-կամ ակնկալման սուբյեկտը (ո՞ւմ միջոցով են փորձում իրենց «ձայնը լսելի դարձնել», ո՞ւմից են ակնկալում, ո՞ւմ են դիմում կամ ո՞ւմից են խնդրում): Ենթադրվում է, որ ակնկալման վերջնական հասցեատերը բնությունն է, բայց պետք է ի նկատի ունենալ, որ

⁴⁹ Գյալթո գյուղում 2016 թ.՝ 2015 թ. մեր այցից հետո, «Բուկա բարանն» արել են:

⁵⁰ Stiu I. Başgöz, նշվ. աշխ.:

ոչ միայն ջուրը, բույսերն ու կենդանիներն են համարվում բնության մաս, այլև երբեմն սրբերն են նույնականացվում բնության հետ: Այսպիսով՝ անձրեւաբեր ծեսերի հասցեատերեր կամ միջնորդներ (սահմանազատել, թե որն է միջնորդը եւ որը հասցեատերը, հաճախ անհնար է) կարող են լինել:

ա. ջուրը, ջուր խորհրդանշող կանաչ բույսերը եւ կենդանիները,

բ. մատաղը (զոհաբերվող կենդանին),

գ. ջուր խորհրդանշող «հարս»-ը կամ դրա դերակատարները («Բուկա բարանե»),

դ. շեյխերն ու փիրերը⁵¹ եւ իրենց օջախների սրբերը եւ-կամ⁵²,

ե. ժողովրդական (բնության) սրբերը (զիարատների սրբերը)՝ ներառյալ Մամառաշանը,

զ. քրիստոնյա հոգեւորականներն ու քրիստոնեական սրբերը:

2. Անձրեւ ստանալու կամ դադարեցնելու նպատակին հասնելու միջոցներից ամենատարածվածը զոհաբերություն-նվիրատվությունն է, որի տարբեր դրսեւորումները (կենդանիների զոհաբերություն՝ մատաղ, նվերներ եւ այլն) կարելի է գտնել անձրեւաբեր եւ նույնիսկ անձրեւախափան ծեսերի եւ գործողությունների ընթացքում: Զոհաբերությունը միշտ ուղեկցվում է աղոթքներով եւ ըստ էության գերբնական էականերին սիրաշահելու նպատակ ունի:

Ընդհանրապես անձրեւաբեր ծեսերում իրականացվող գործողությունները կարելի է բաժանել երկու՝ հակադիր վերաբերմունքների խմբերի: Առաջին խմբի⁵³ գործողությունները ներառում են խնդրելու (աղոթք, աղոթք-երգ), սիրաշահելու (մատաղ), համոզելու (երգ-աղոթք), խաբելու (օր.՝ անձրեւի նմանակման), իսկ մյուս խմբի վերաբերմունք արտահայտողները՝ բողոքելու, դրդելու, մարտահրավերի, հարկադրելու տարրեր (օր.՝ ջրի հետ կապված կենդանիներին վնասելը, «Բուկա բարանե»-ին ծեծելը, ջրի մեջ գցելը, թաղելը եւ այլն) եւ կարող են նույնացվել դրանցից մեկին կամ ներկայացված լինել դրանցից մի քանիսի համալիրներով (երբեմն երկհակադիր): Վերահիշյալ բոլոր տարրերը առկա են «Բուկա բարանե»-ի ծեսի անձրեւաբեր եւ անձրեւախափան տարբերակներում:

⁵¹ «Յուրաքանչյուրի աղոթքը պիտի սուրբը իրականացնի, որ աղոթքը հասնի նպատակակետին»:

⁵² Երբեմն նույն սուրբը կարող է լինել եւ՝ օջախի, եւ՝ օջախից դուրս գտնվող սուրբ:

⁵³ Այս խումբը պայմանականորեն համարենք «դրական» վերաբերմունքի, իսկ մյուսը՝ առաջինին հակադրվող՝ «բացասական» վերաբերմունքի խումբ:

3. Միայն «առօրեականացված» միանձնյա կատարվող ծեսերն են, որ կարող են իրագործվել ցանկացած վայրում: Մյուս՝ խմբակային ծեսերի իրագործման վայրերը կարելի է խմբավորել այսպես.

ա. շեյխերի եւ փիրերի օջախներ (տվյալ օջախի սրբին⁵⁴ ուղղված աղոթք եւ մատաղ, շեյխի կամ փիրի աղոթք),

բ. բնակատեղիներ ընդհանրապես (ներառյալ բարձրլեռնային անասնապահական կայանները) («Բուկա բարանե»),

գ. ժողովրդական սրբավայրեր (տվյալ սրբավայրի սրբին (սրբերին) ուղղված աղոթք եւ մատաղ),

դ. սովորական տան բակ (ժողովրդական սրբերին ուղղված մատաղներ),

ե. քրիստոնեական սրբավայրեր՝ խաչքարերի, մատուռների եւ եկեղեցիների մոտ (աղոթք, մատաղ),

զ. բակային սրբարան ունեցող տան բակ (տվյալ տան (մրիդի) սրբին ուղղված մատաղներ)⁵⁵,

է. մշակվող դաշտ (քահանայի աղոթք):

Ստորեւ ներկայացվող դասակարգումը մեր գրանցած անձրեւաբեր ծեսերի կոպիտ եւ թերեւս մակերեսային կարգաբանման փորձ է, որտեղ չեն դիտարկվել դրանց պատմական եւ հավատալիքային նախապատմությունները, սակայն այն թույլ է տալիս սխեմատիկ ձեւով խմբավորել անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերը, ինչպես նաեւ մասամբ հասկանալ դրանց բնույթը:

Եզրակացություններ. Հայաստանի եզդի բնակչության մշակույթում առկա են անձրեւի հետ կապված հավատալիքներ եւ ծեսեր, որոնք հիմնականում համընկնում են հայերի համապատասխան՝ ծագումով ոչ քրիստոնեական հավատալիքների եւ ծեսերի հետ, մասնավորապես այն հավատալիքների ու ծեսերի, որոնք ներկայումս կրոնական պատկանելություն չունեն: Դրանցից է «Բուկա բարանե»-«անձրեւի հարս» ծեսը, որը համընկնում է հայկական «նուրի»-ի հետ: Սակայն եզդիների՝ անձրեւին առնչվող որոշ հավատալիքներ եւ ծեսեր բնութագրական են միայն այս ժողովրդի համար, օրինակ՝ դավանանքով պայմանավորվածները, կամ համեմատաբար բնութագրական են, օրինակ՝ կենսակերպում եւ տնտեսությունում հեռազնա անասնապահության գերակշռմամբ պայմա-

⁵⁴ Երբեմն տվյալ հոգևոր կաստայի՝ շեյխի կամ փիրի սուրբը նույնացվում է բնակատեղիից դուրս գտնվող որեւէ ժողովրդական սրբավայրի սրբի հետ: Այս դեպքում այդ սրբի օջախում կատարվող աղոթքը եւ մատաղը կարող են երկու հասցե ունենալ:

⁵⁵ Երևույթը նոր է եւ հազվադեպ:

նավորվածները: Դավանանքով պայմանավորված յուրահատուկ ծեսը եզդիականություն չհոգեւոր առաջնորդների՝ շեյխերի եւ փիրերի սրբացված օջախների եւ Մամառաշանի՝ կայծակի, անձրեւի եւ ամպրոպի ոգու համար գոհաբերություններ անելն է, որոնք երբեմն կատարվել են «Բուկա բարանե»-ի ծեսի հետ միասին կամ որպես դրա շարունակություն: Եզդիները՝ տնտեսության անասնապահական ճյուղի գերակշռմամբ եւ կիսաքոչվոր կենսակերպով է պայմանավորված լեռնային արոտավայրերում «Բուկա բարանե» ծեսի անձրեւախափան տարբերակի հանրայնությունը, որը տվյալ դեպքում հողագործությունը չի առնչվում:

Հավելվածներ. Կից հավելվածներում տրվում են մեր բանասացների հետ հարցազրույցների՝ բուկա բարանեին առնչվող ծեսերի վերաբերյալ պատմությունների մի քանի դրվագներ՝ նվազագույն խմբագրությամբ եւ որոշ դեպքերում մեր մեկնաբանություններով:

Հավելված 1: Թալինի Սորիկ գյուղի բնակչուհին (150614-2a) պատմում է նախորդ տարի իր կազմակերպած բուկա բարանեի մասին. «Բուկաբարանե⁶, հա, բուկաբարանե ման են տալիս, որ անձեւ գա, անձրեւի համար տիկնիկ էին ման տալիս: Ես էլ եմ արեւ. անցյալ տարի, որ անձրեւ չկար, չորային էր, էս թոռնիկներն ձեռքը տվեցի՝ տարան, ասեցի տարեք հարեւանների մեջ, թող ջուր լցնեն վրեն: Իմ ժամանակ, գիտե՞ս ինչ արեցին, ավելի վրա երեխեքիս շորերից մի հատ շոր հագցրեցի, աղջիկ երեխայի մի հատ դերյա հագցրեցի, ու ըսենց մի հատ փետի կտոր հագցրեցի ավելին, որ թեւիկներ լինի՝ ըսենց անցկացրեցի, խաչով արեցի, էս շորը հագցրեցի՝ յանի հարս ա, բուկա բարանե՝ անձրեւի հարս: Հարսը էս ձեւի արեցի, հետո երկուսը՝ ամեն մեկը մի ծայրից բռնեցին ու իրանք տարան ման տվեցին: Ջուր էին լցնում վրեն, որ անձրեւ գա, ամեն մեկը մի *ведро*, մի *крышка*⁷ ով ինչքան ջուր ուզում ա լցնում ա վրները: Ջուրը լցնում են մեր երեխեքի վրա էլ, Վարդեվորի նման ջրում են, իրանք [երեխեքն] էլ էին լավ ջրոտվել: Հետո իմ երեխեքին ոնց որ մաղարիչ տային՝ ձու տվեցին, կանֆետ տվեցին, ըսենց երեխեքս ուրախացան, եկան տուն, ասեցի՝ տարեք [բուկա բարանեն] գցեք ջրոտ տեղ՝ էս [գյուղի] գյուղի մեջ՝ թող անձրեւ գա: Որ ջրոտվի, անձրեւ գա, թաց մնա, որ անձրեւ գա... Ու ըսենց էլ եղավ՝ եկավ, հետո օրհնեցին մեր հարեւանները բան... «Վայ աստված քեզ հասնի, քո երեխեքին, ինչ լավ ա անձրեւ եկավ...»: Դե մեր մոտ անձրեւը շատ մեծ բան ա, պետք ա պարտադիր լինի...» (150614-2a):

Հավելված 2: Թալինի Կանչ (Գյալթո) գյուղի տարեց կանանցից մեկը (150604-4a) նկարագրում է, թե ինչպես պետք է լինի բուկա բարանե ծեսը, ապա վերապատմում է իր մոր պատմածները եւ ապա պատմում իր մանկական հիշողությունները այդ ծեսին մասնակցության մասին. «Բուկա բարանե՝ անձրեւի հարս: Որ անձրեւ չի գալիս, բերում են մի հատ ավել, մի հատ փետ են խփում ավելին տակը, էտ ավելը որ ըսենց կապում են, գիտես չէ՞ ավելի կապած տեղը, էտ ավել ա ըլնում, էտ ավելը մի հատ փետի գլուխ խփում են թեւերը ըսենց դնում էին՝ մի հատ փետ ըսենց [խաչաձեւ] դնում էին, թեւերը սարքում են, մի հատ շոր հագցնում են, լսա՞ր: էտ փետ են սարքում, շոր են հագցնում: [Հետո] էտ հարսին հարսնաքուրերը՝ իրա փոքր աղջիկներ էլի, մի հարսնաքուր մտնում ա էս թեւի տակ, մի հարսնաքուր՝ էս թեւի տակ, երկու թեւերը [մտած], գյուղի մեջ պտտցնում են... Հարսնաքուրերը՝ փոքր երեխեքը մտնում են թեւը ման են տալիս, երեխա՝ մեծ կնիկներ չէ, իմ նման չէ, փոքր՝ յոթ տարեկան - ութ տարեկան աղջիկներ: էտ ավելն են ման տալիս: [Որպես լրացուցիչ տարբերակ, թեմայից մի քիչ շեղվելով, պատմում է] Հետո էտ որ հարսնիք ըլնում էր չէ, ձիով էին բերում, ավտո չկար, ձին տանում էին տղեն գյամը քաշում էր հարսն էլ վրեն նստած բերում էին: Իսկ հիմա էս որ բուկաբարանեն ման են տալիս, էս որ ձի էղնում՝ էշը, էտ ավելը... էն ժամանակ էշ էլ կար, էշը նստցնում են հարսին էշով են բերում: էտ ավելն էլ որ անձրեւ գալիս ա ասում ա «Բուկաբարանե» [«բուկաբարանե»-ն մի քանի անգամ կրկնում է] անձրեւի հետ էթում ա... [Դռնեղուռ տանելու եւ պարացնելու ընթացքում ասում են.] «Բե՛ բարանե, բըբա՛ր, բըբա՛ր, իդի բասը դա բըբարը, ջուջուկե նանե տա խար (Bê baranê bibar bibar îdî bese de bibar, cûcûkê nanê te xwar)»։ Քո հացը կերան էլի, ջուջուկ՝ ճնճուղներն են, ճնճուղներն էլ եկան քո հացը կերան... «Բարանե՛, դա տը բըբարա՛, ճվիկե նանե տա խարե... (Baranê de bibarê çivîkê nanê te xwarê)»։ Այսինքս՝ «բուկաբարանե բըբարե»՝ անձրեւ արի, քո հացը արդեն կերան չուր մնաց ճնճուղները տարան... էտ մարդիկ ինչ որ տալիս էին իրանց շաքար էին տալիս, ձու էին տալիս, ալյուր էին տալիս, յուղ էին տալիս, ըտենց տալիս էին... դրանք էլ տանում են կաթնով էին եփում, շաքար էին գըցում մեջը, թե ալյուր յուղ տալին՝ հավլա էին անում, ընդե չուր երեխեքով ուտում էին գալիս էին...

Իմ մաման Սաբունչի ա եղե, Հացաչեն, Սաբունչի, իմ մաման Սաբունչեցի ա եղե, պապս էլ էրեվան ա եղե: էսի իմ մերը ըտենց ա անում, ստե Սաբունչի ա մնում իմ մաման, բերում են ման են տալիս բուկա բարանե գյուղի մեջ: Ով որ իրանց բրինձ ա տալիս, ով որ կաթ ա տալիս, ով որ շա-

քար ա տալիս, տուն-տուն ման են գալիս, էտ դրանց իրանց նվեր են տալիս, հարսին նվեր են տալիս: Նվերն էլ՝ կաթ ա, շաբաթ են անում, բերում են կաթնով են անում, էթում են չոլը, չոլը կաթնով են անում... էտ հարսը ում հայաթը գնաց մի *сестро* ջուր լցնում են էտ հարսի գլխին, որ անձրեւ գա... (Բուկա բարանե, «բարա» նշանակում ա անձրեւ, «բուկ»-ն էլ հարս ա) էթում են յանի պարում են, ձեռները ծափ են տալիս, ուրախնում են: էտ ճաշը՝ ինչ որ հարեւանները տվել են իրանց էլի, թե որ յուղ տված ըլնեն՝ հավլա են անում, թե որ կաթ տված ըլնեն՝ կաթնով են անում, թե որ ձու տված ըլնեն՝ խաշում են, հաց էլ հավաքում են, դնում են չոլը ուտում են, սեղան դնում ուտում են: Հա, հետո բուկա բարանեն էտ ջուրը լցնում են, էտ հացը դնում են՝ սեղան են դնում, էտ երեխեքներով ուտում են: էթում են գյուղի ծայրն են սարքում [ուտելիքը], գյուղի մեջ չեն սարքում, էլի... Մի անկյունի մեջ սարքում են, էտ հացը ուտում են ու անձրեւը գալիս ա: Հենց էտ օրը չէ, թե մի օր, թե երկու օր՝ արդեն անձրեւոտ ա ըլնում: Իմ մաման իրանց *нось*-ն ա ըլնում, իմ մաման նստում ա ամանի տակը: Սաբունչի ա եղե էտ դեպքը, իմ մաման բերում ա շորբա յա էփում, տակը բռնում ա, կողերը բռնում ա, իմ մաման էլ գդալը բռնում ա, մաքրում ա ուտում ա, մեկ էլ տենում ա փեշը կրակը ընդնում ա: Խաբար ա էթում պապուս՝ ասում ա, Կարինեն ասում ա վառվել ա... Իմ պապը բռնում ա հենց մի հատ ղըսըր ոչխար մորթում քերթում ա, իրան դմակը բերում ա երեխին էտ փաթաթում ա ու իմ մաման մի շաբաթից լավանում ա: Քսանիրեք-քսանչորս թվին ա եղե էտ դեպքը, հա՛... Հե՛յ, որ իմ հերը գնաց ուղեց բերեց, ասում էր, դու քո հորը (հերանցը) գնացել ես բուկաբարան ես ման տվե, մենք ըտենց ասում էինք մամային, էլի... Մինչեւ ամուսնանալը, մամաս յոթ-ութ տարեկան ա էլել էր, տասնչորս-տասնհինգ տարեկան նոր են ամուսնացել: Իմ մաման, տասնիրեք տարեկան ա, քսանիրեք-քսանչորս թվին ամուսնացել ա... էտ Սաբունչիում ձորն իջա, որտե որ իմ մաման այրվել ա, ես միշտ էթում եմ ընդե, ասում եմ՝ մամ, դու ստեղ ես այրվե, տեղը երեւում ա:

Ես մասնկացել եմ [բուկա բարանեին]: Առաջ բան կար... մեր անասունը, մենք որ սարը անասունին պահում էինք, էտ ղոչերը մենք երկու տարեկան էինք անում, հերս բերում էր էտ ղոչերից, շատ կներեք իմ արտահայտությունը հըմար, կըրտըմ էր (կըրտըմ էր, որ ռխչրի հետեւից չէթան, որ չաղ մնան, լսա՞ր), կըրտըմ էր, էտ իրա կըրտած տեղը ես բերում էի իմ համար լոռ էի դընում, էսքան էր էլի [ցույց է տալիս խոյի ամորձապարկի չափերը], լոռը դնում էի մեջը բերանները կարում էի, գըցում էի ամանե-

րի մեջ: (Մենք առաջ մեր մածոնը լցնում էինք տիկերի մեջ, մենք ձգում էինք չուսիկներ տիկ ունեինք, որ ոչխարը մորթում էինք, կաշի չէին հանում, տիկ էին հանում... Հանում էին, էտ ոտերը կապում էին, գլուխը, բերանը կապում էին, դնում էինք ամանները բանի մեջ, սեպի սարքում էինք, հարում էինք, ու դրանից հետո, մեր մածոնը լցնում էինք էտ տիկերի մեջ, էտ տիկները ամեն օր քերում էինք, ջուրը որ էթա, էտ մածոնը պնդնա մեջը, լսա՞ր, մածոնը որ պնդնում էր, բայց ամեն ինչը իրա ժամանակին բան կար... Հիմա արդեն պամիդորով ճաշ են եփում, մենք առաջ պամիդորով ճաշ չէինք ուտում: Պամիդոր չկար, մի հատ կնիկ որ հղի ըններ, երկու կիլո շաքար էին առնում իրա համար, ասում էին ծննդաբերության ժամանակ, թող շարքաթ անի խմի, որ խելքը գա գլխին, իսկ հիմա ամեն օր շարքաթ կա, էլ խմող չկա...): Հա, էտ բուկաբարանե, չէ՞, որ մենք էթում էինք բուկաբարանե, ուրախություն էր, էլի՛..., կյանք էր, էլի՛..., կյա՛նք էր, կյա՛նք, մենք որ ուրախանում էինք, չէ՞, մեր լոռն էինք բացում՝ յանի տան կնիկ ենք, մեր փոքր լոռ, թաղած լոռերը բացում էինք: էտ բուկաբարանեի վախտը, ուրխնում էինք, հարսանիք էր, հարս էր գյուղի մեջ ման գալիս, մենք էլ պարում ենք, տնգըլ-տնգըլ էտ հարսին մինչև գյուղը պրծնում էր, վազում էթում էինք էտ ճաշը եփում էինք, ուտում ենք, ձեռները մաքրում գալիս էինք, ըհը, տղա ջան... Ես տեսել եմ, ստե էս գյուղն [Գյալթո] էլ են արե, ստե առաջ բուկաբարանե գյուղի մեջ պտտում էին: Ստե հո էս քանի տունն չէին, յեքա հարյուր-հարյուր քսան տուն էր, լսա՞ր հարյուր քսան տուն:»: Մեկ ուրիշ կոնտեքստում հարցին թե ե՞րբ սկսեցին բուկաբարանե չանել, Գյուլիզարը պատասխանում է «[Երբ] Արդեն գյուղը ըսենց դատարկվավ», հետո ավելացնում, որ 1980 թ.-ին էլ, 1990 թ.-ին էլ արել են (150604-4a): 2016 թ.-ին, երբ կրկին այցելեցինք Գյալթո գյուղը, իմացանք, որ 2015 թ.-ի մեր այցելությունից հետո, ամռան ընթացքում գյուղում բուկաբարանեի ծեսն արել են:

Հավելված 3: Թալինի շրջանի Սորիկ գյուղում տարեց կանանցից մեկը պատմում է (150614-3a). «Անձրեւ եթե չի գալի մի հատ էլը բռնում են, մի հատ ավելը կախում են իրա հետը կամ դնում վրեն, մէ էրկու ջահել, խամ-խամ տղերքը պտտցնում են տները, ասին՝ բուկաբարանե էտ գյալա, մէ վեդրո ջուր դու պտի լցնես վրեն, գա իմ դուռը՝ մեկը ես պտի լցնեմ, մէ քիչ էտ երեխեքին բան-ման տամ: էտ երեխեքին մեկը մի բուռ կանֆետ ա տալիս, մեկը կոպեկ ա տալիս, կամ հավիկիթ են տալի, առաջ ըտենց էր: Սաղ տներից ման ա գալի, գալի էտ ավելը հանում ա դնում իրա տեղ, առավոտը անձրեւ պոնի գալիս ա, սելավի պես գալում ա...» (150614-3a):

Հավելված 4: Աժդահակ լեռը տանող ճանապարհի ժամանակավոր անասնապահական կայաններից մեկում («Աղմաղան հյուրանոց») բանասացը՝ միջին տարիքի կին (160804-3b), բուկա բարանների մասին պատմում է. «Որ էս մեր օրեքը լիքն էր ժողովրդով, դե ախչկերքը անում էին, էլի... Ախչիկ, ազապ ախչիկ էրեխա պտի լինի, ախչիկ էրեխուն նստըցնում են էշի վրա, պտտցնում են, տները ֆռցնում են ու... ջուր են լցնում վրեն, էլի... Էտ ախչիկ էրեխու գլխին ջուր են լցնում, որ անձրեւ գա:

Եթե որ չի կտրվում, անձրեւը գալի չի կտրվում, կուկլա են սարքում, տանում են ընենց տեղ են թաղում, ասեմ, չընգըլների մեջ, չոր տեղ: Պտի չոր տեղ թաղեն, որ անձրեւը կգրվի: Հիմնականում սարում են անում, գյուղում չենք արել, ստեղ են արել: Երեւի մի իրեք-չորս տարի առաջ էլ արել են: Մի տարի էլ կուկլա էին սարքել, տարել թաղել էին, տեքըրա էկե, անձրեւ չի էկե, եսի՞մ, մի ամիս, ինչ... «Շուտ արեք գնացեք էդ որտեղ եք թաղե, գնացեք հանեք հըլը»» (160804-3b):

Հավելված 5: Թալինի Օթեւան (Բայսզ) գյուղի տարեց բնակիչներից մեկը (160625-2a) անձրեւաբեր եւ անձրեւախափան ծեսերի մասին պատմում է հետեւյալը. «Եթե որ երաշտ եղնի, անձրեւ չկա՝ մի հատ շորով մի բանի վրեն փաթթում էին, ավելի վրա խըփում էին, տանում գյուղի մեջ ժողովուրդը ջուրը հռչտում էին էդ հարսի վրեն: Հա, օրինակ հարս ա, էդ ավելի վրա մի փետով անցկացնում էին, էրկու հոգի, մեկը մե ճիպոտի գլուխ, մեկը մե ճիպոտի գլուխ, ման էին գալում գյուղի տների մեջ, իրանք էլ ջուր էին հռչտում: [Տնեստուն ման տալուց հետո բուկա բարանեն՝ տիկնիկը] Հորում էին, ջուր էին լցում վրեն, որ անձրեւ իգա, բուկա բարանե ման կգա՞յին, կտանեին, թացվել ա, չէ՞, կտանեին մի տեղ, քիչըմ հող քցում էին վրեն, հալա մի վեդրո էլ ջուր էին լցում էին վրեն, որ անձրեւ գա: Պատահում ա, որ անձրեւ գալում էր: Էդի հնուխյուն ա...

Պատերազմից առաջ էլ, հետո էլ արել են [բուկա բարանե], կոլխոզ էր ըստեղ, վարուցանք էին անում, եզներո՞վ... ցանքը ցանում էինք, դաշտերը, անձրեւ չկար՝ իգուռ ա, վառում էր, չէ՞, ջուր էլ չկար, որ ջրեին... Տեղ կար՝ ջուրը կար, տեղ էլ կար՝ չկար: Իրանից (պատանի թուղից) փոքր էլ էղել եմ, իրանից մենձ էլ էղել եմ, հըլը բուկա բարանե ման են էկել գյուղի մեջ: Կերթային... օրինակ տներուն վրեն, ման գալում էին, տուն էին ման գալում, մե-մե տուն կերթային՝ բան էին հավաքում, օրինակ, բուկա բարանե էն որ ման էին գալում, հավգիթ ա, կանֆերտ ա, շաքար էր, խնձոր էր, էն վախտ, հա՛, տալիս էին: Ասում ա. «Տար թող ձեր միտքը որոշեն, որ անձրեւ էղնի», ուրախանում էին ժողովուրթը էն վախտ: Ուտանավոր

ի՞նչ բառի ասելին, ոտանավորը ասում էին. «Բուկա բարանն մենք բերել ենք», հայերեն ասեմ՝ դու խմանաս... Եզդիներեն՝ «Բուկա բարանն դըգարինը բալքի խադե ռանդըկը, բարան բե՝ բալքի ռըսխե բառա հեսիրա մաջա հադե (Bûka baranê digerîne belkî Xwadê Rem bike baran be, belkî riskê bela hêsîra merîa heve)», մեր հայերեն ասում ա. «Բուկա բարանն ման ենք գալըմ, որ անձեւ իգա, Աստված ռան մենա (ողորմա) մեզի, որ մեզի փրգե՝ անձրեւ մի գա, ցանքը հասնի, մենք մեր ցանքերը հավաքենք, որ ապրենք, յուր էրթանք»: Է՛, մի էրկու-իրեք օր կանցնել՝ խշխշալով անձրեւ կուգար: Այ տենց բաներ կա...

[Վերջին անգամ գյուղում] Միջեւ տաս-տասերկու տարի առաջ էլ արել էին, բայց հիմա չկա: Ես իմ թոռնիկ կասեի, հավաքվեք իրար, մե հատ բան ա՝ ավելը, ավել՛, ավել՛, որ գետին մաքրում ենք, չէ՞, փետ՝ մի ճուղ անցկացնելինք, ամեն մեկը մի կլուխ բռնեք, շոր մը քցեք, էնա յա բուկա բարանե, ման արեք: Բուկա բարանն վախտ ասում էինք. «Ման արեք, բուկա բարանն տարեք-պերեք՝ բալքի Աստված մեզի ռամենա (ողորմա)՝ անձեւ մի գա», էնպես էլ կեղնիր... Հիմա չեն անում, հիմի չկա, բայց առաջ անում էին:

Բայց եթե որ [անձրեւ] չատ կուգար՝ էս տարվա պես, էրգու հոքի՝ մի անընով, օրինակ՝ Ռոման-Ռոման, հա՛, գիդե՞ս ի՞նչ են անում որ անձրեւ կղրվի, գետնի վրա նըստըմ էին, իրար կոխկի կնստեին, ցից՝ մի հատ երկաթ՝ փեդ էլի, գեդին խըփըմ էին, գեդնի վրեն կղնեն՝ հերթով կիփեն. «Նավեմ Ռոման, նավետը Ռոման, հան սընգա բոքըտըն սարի ռաղացէ (Navê min Roman, navê te Roman ha(n) singa bikute serî raxacê)»՝ «Իմ անուն՝ Ռոման, քո անուն՝ Ռոման, ցիցը գարգենք՝ ամբերը բացվի, ամբերը փախնին», հա՛: ... ասում ա. «Աստված, թող անձրեւ կղրվի էլի, ժողովուրդ մեխք ա, բերքահավաքի վախտն ա...», «Աստված, կլնի՞ գոնե բերքահավաքի ժամանակն ա՝ անձրեւ չգա»... [Հետո] գետին փորըմ էին, էդ շորը փաթթըմ էին մի բանի վրա, իփըրթի հարս ա, հա՛, էտի կծածկեին, ջուրը արդեն հարուր տոկոսով ցամքըմ էր էդի՝ էլ անձրեւ չէր գալըմ... մինչեւ... էն էլ Ասծու բան ա, էլի... Ես էդ ամեն ինչը տեսել եմ...» (160625-2a):

Հավելված 6: Մեր բանասացներից ոմանք բուկա բարանեն եւ Մամա-ռաշանը նույնացնում են մեկ հասկացության ներքո: Ահա Թալինի Հակկո գյուղի երկտասարդներից մեկի օրինակը (160802-2e). «Էտի, բուկա բարանն գիտե՞ս հիմնականում ինչի հըմար ա, որ խոսքի երաշտ տարի ա ըլնում, անձրեւ չկա, մատաղ են տալըմ, Մամե Ռաշան, դե էտի ոնց որ անձրեւի աստվածը ըլնի էլի, Մամեռաշան... Մամե Ռաշան էդի հենց անձրեւի աստ-

վածքը որ կա՝ էտի ա, դե մեր լեզվով, ես հայերեն չգիտեմ ինչ են ասում: Մամե Ռաչան, մատաղ են տալում իրան, էտ մատաղը անում ենք իրան կանչելով, որ ինքը խոսքի անձրեւ ընենց անի, որ անձրեւ գա: Ու իրոքից ըզենց բան կա էլի, որ իչքան մատաղ են տվե՝ անձրեւ էկել ա: Էս տարի էլ մի մոմենտ մեր մոտ մի ամիս համարյա անձրեւ չեկավ, էս մեր կողի գյուղը՝ Գյալթոն, մատաղ տվեց, հենց էդ օրը, (հա, էս տարի), անձրեւները սկսվան: Մեր մոտ չկար էլի անձրեւ, մեր մոտ էս տարի մե ամսից ավելի երաշտ էղավ, անձրեւ չկար վապչե: Մատաղ ենք տալը, դե էս գյուղն էլ հիմնականում մեծամասնությունը հողագործությունը ա զբաղվում: Ինչ, գարին, ցորենն ա ցանում, որ եկամուտ ունենա: Էս գյուղում ընենց բան չկա, խոսքի՝ ծառ տնգես, ծառերի միրգ ծախես, ըզենց բան չկա: Մեր մոտ հիմնականում մեծամասնությունը գարիով, ցորենով, ոչխարով, խոսքի՝ մալ, անասուն պահելով ենք էլի ապրում: Դե որ անձրեւ էլ չըլնի՝ չես կարա պահես՝ ոչ արոտ կըլնի, ոչ գարի-ցորեն կըլնի... Էդ Մամե Ռաչանը ըզրա համար ա:» (160802-2e):

Այս մյուս դեպքում եւս, բանասացը՝ միջին տարիքի տղամարդ Արտաշատի Մրգավետ գյուղից (160805-6a), բուկա բարանեն նույնացնում է Մամառաչանի հետ: Հարցազրույցը անց է կացվել Աժդահակի Վանքի լճից հարավ-արեւմուտք ընկած անասնապահական կայաններում: Պատմելու ընթացքում բանասացը պարբերաբար հիշատակում էր կայծակի վտանգավորությունը եւ դեպքեր, երբ իր շրջապատի մարդկանց, ներառյալ ազգականների, կայծակ է խփել սպանել (բանասացը ակնատես է եղել): Կայծակի հետ կապված դեպքերով շատ տպավորված էր եւ աստվածավախությամբ էր հիշատակում Մամառաչանին: «Բուկա բարանեն Մամառաչանն ա: Եթե տարին անձրեւոտ ա, բուկա բարան են անում: Էս փոքր էրեխա էիմ, երեւի մի վեց-յոթ տարեկան, աչքիս առաջ հորքուրիս տղուն կայծակը խփեց: Բուկա բարանը հենց էդ սուրբ հրեշտակն ա, Մամառաչանն ա: Մամառաչանը ուրեմն, անձրեւի տեղումների հրեշտակապետն ա՝ մեր ավանդություններով: Բուկա բարանեն թաղում են ու իրա պատարագն (հոգեհաց ի նկատի ունի - ՌՀ) են մատուցում: Բուկաբարանն՝ անձրեւի հարսը: Որ ասում են բուկաբարանն թաղենք, իրանք փետով այ սենց սարքում էին իրանք իրանց ձեւով, մի քսան սմ, մեկը թեմ էր դնում, մեկը, ես հիշում եմ, մի հատ կոճակ էին դնում գյուղի, ըսենց փետի գլուխը, ես լավ պստիկ վախտ հիշում եմ, մեր մեծերը՝ տատիս էր, մամաս էդ վախտ հարս էր, մեր գյուղից եզդիների կնանիք կային... Այ սենց կոճակ խփում էին՝ երեւի դրա գլուխն էր, յոթը գուլնի շոր էր, այ սենց պստիկ կտորներ,

փափրթում էի դրան ու տանում էին թաղում էին: Հիշում եմ, էրեխա էինք, գնում էին, որտեւ կնանիք հալվա էին սարքում պատարագ մատուցում, հալվայի հետեւից գնում էինք: Ուրեմը էտի տանում էին, երկու-իրեք կնանիք, էն վախատ սենց մի երկու տուն չէինք, էն վախտ քառասուն-հիսուն տներով գնում էին մի տեղ, էտի մի երկու իրեք մեծ կնանիք տանում էին մի տեղ թաղում էին... էրեխեքին չէին թողում, մենք մենակ տենում էինք էդ սարքելը: Տանում թաղում էին հետո գալիս էին, օբի մեջտեղը օջախ էին վառում, դազանով հալվա էին դնում, էդ հալվայով պատարագ էին մատուցում, էդքան էրեխա պտի, վազելով... հալվան, որ ձեռով կլոկ են սարքում, ամեն մի էրեխուն մի քիչ հալվա էին տալի: Ընենց էին անում, որ օբի էն վերջի չոբանը, գառնարածը, սա՛ղ օգտվեն էդ հալվայից: էտի կոչվում էր պատարագ մատուցել, որ տեղումները, էդ կայծակները, բաները, անփորձանք ըլնի: էս իմ պատմածը ութանասունիրեք-չորս թվերին ա էղել, էս ներքեվի սարում ա էղել: Ես իրեք-չորս ըտենց տեսել եմ, ոչ թե մենակ մեր օբեն ա էլե, շատ օբաներ ըտենց բան ա էղել, սաղ էլ անում էին: Ես գիտեմ, ես տեսել եմ, այ էս պստիկ տղուս թայն եմ էլե, մինչեւ հմի հիշում եմ: Իսկ որ երկար ժամանակ անձրեւ չէր, էշին տանում բաղնիք սաղ օբով լողցնում էին, որ անձրեւ գա»: (160805-6a):

Մեկ այլ դեպքում, Գեղաձորի վերելի օբաներից մեկում, բանասացը խոսափեց մանրամասնել բուկա բարանե ձեսը, ասելով, որ այդտեղ՝ սարում իրենց հարեւանը արել է ու իրենց տնից մարդ է մահացել. «էս տարի անձրեւ մեղի կերավ՝ ուիսկ չարինք» (160809-2a):

Կամ մեկ այլ օրինակ, որտեղ թվում է թե բանասացի վերարտադրած խնդրանք-աղոթքը ուղղված է ոչ թե բուկա բարանեին, այլ Մամառաշին. «Բուկաբարանե՝ եթե ամպերը գոռգռում են, բան են անում: Բուկաբարանե՝ «Աստված, ժողովուրդը մեղկ ա՝ չոլում ա, աստված, բուկաբարանե խաթրե նավի, խաթի կո, մէ քիչ՝ եթե գալիս ես, հանգիստ արի, վնաս չտաս, չոբաններին, ոչխարներին...»: էտի ասում են բուկաբարանե:» (150614-3a):

Հավելված 7: Պատմում է Թալինի Հակկո գյուղի կանանցից մեկը (160802-2d). «Բուկա բարանե... էտի փետով են սարքում՝ խաղալիքի նման՝ ձեռ, ոտ... Լաչակը կապում են, շոր են հագցնում... Ասենք իմ անունն էլ ա Գուլե, իրա անունն էլ ա Գուլե, չէ՞, մենք երկուսով Գուլե ենք, [բուկա բարանեն] վերցնում [տանում] ենք գյուղամեջը, երգ, բան են անում, ջուր են լցնում [բուկա բարանեի վրա], [ժողովուրդը մեղ] հավիթ են տալիս, դե ինչ որ իրանց ձեռը կա՝ տալիս են, դու էլ էդ ուտելիքը, որ հավաքում

ես՝ տանում տալիս ես մի հատ քյասիբի: Զուրը լցնում ես [բուկա բարանների վրա]՝ արդեն անձրեւը գալիս ա: [Հետո էդ բուկա բարանեն] Քցում են ջրի մեջ: [Մեր գյուղում բուկա բարանեն] Երկու-իրեք տարի առաջ ա էղե:

Մատաղ [էլ] ենք տվե ջրի, անձրեւի համար: Գյուղացիքը փող են հավաքում, ասենք մենք ստե Հինգ հոգի ենք, չէ՞, մենք Հինգ հոգով փող ենք հավաքում, մի հատ գառ ենք առնում, ուտելիք, խմիչք, դե՝ *СОК*-եր ա, բան ա, առնում ես, սեղանը քցում ես, էտ մատաղը՝ մորթում, քաշում ես սեղանի վրա՝ փոքրերը, մեծերը հավաքվում են [ուտելու]: [էդ մատաղը] Անձրեւի համար ա, Մամեռաշան համար ա, անում ենք, որ անձրեւը գա, էն էլ գալիս ա:

...[Բուկա բարանեն ու մատաղը] նույն օրը, իրար հետ ա էղե, հա: Ասենք երկու հոգով [բուկա բարանեն] տանում են [գյուղամեջ], [խկ մյուսները] հավաքում են ինչ կա, ինչ չկա: Տղամարդիքներն էլ, էս ա ստեղ մեր վերեվը սուրբ կա, սրբի դուռը [մատաղը] մորթում են: [Սուրբը] Ստեղ ա, դպրոցի մոտն ա: [Սուրբը] Շեյխի տունն ա, տանում են ընդե, ընդեի օջախը վառում են, խաչամեն կաստրոլիով դնում են, սեղանը փռում են, տղամարդիկն էլ նստում են: ...Ամաններով դնում են չոքընում են հաց են ուտում, այ տենց էլ մեր տղամարդիկները, նստում են, ուտում են...» (160802-2d):

Նկարագրվող տարբերակը, որը հաստատվեց ու լրացվեց համագյուղացիների կողմից, տիպական օրինակ է, երբ բուկա բարանների ծեսի «գասական» տարբերակը կատարվում է շեյխի սրբի օջախի եւ Մամեռաշան ոգու համար միասնական մատաղի եւ աղոթքի հետ համակցված: Համագյուղացիների պատմելով՝ Հակկոյի շեյխի (շեյխ Ռաշիդ) օջախը (Մալա Զըն Տայար), որի մոտ համագյուղացիները մատաղ են անում, հայտնի է նաեւ հոգեկան հիվանդություններ բուժելու գործընթացը: Ներկայումս շեյխը գաղթել է Ռուսաստան, տունը ավերակների է վերածվել, սակայն համագյուղացիները շարունակում են այցելել այդ շեյխի օջախ, դրա հարեւանությամբ մատաղ անում, խաչամա պատրաստում եւ հենց տեղում էլ ուտում: Այդ նպատակով շեյխի տան դիմաց ավերակներից քարեր օգտագործելով՝ մատաղն ուտելու համար սեղան եւ նստարաններ են պատրաստել (160802-2e. a):

Աղյուսակ 1. Բուկա բարանների և անձրկին առնչվող այլ ծեսերի մասին տեղեկություն տրամադրած մեր բանասացները

ID		Բանասաց	Տարիքը (տ)	Մշտական բնակության վայրը	Նախկին շրջան	Մարզ	Հարցազրույցի ամսաթիվը	Սար գնալու վայրը
140706-A2b	♂	շեյխ Վազիր	~75	Զամշու	Արագած	Արագածոտն	2014.07.06	-
141004-4a	♂	շեյխ Բադր	44	Ալազյազ	Արագած	Արագածոտն	2014.10.04	-
150406-1a	♂	Ռաշիդ Ռզգոյան	49	Շենիկ	Բաղրամյան	Արմավիր	2015.04.06	-
150603-2a	♂	Չոլո Բշարյան	78	Կանչ	Թալին	Արագածոտն	2015.06.03	Արագած
150604-1b	♀	Սուսիկ Սալոյան	50	(Արեգ->) Կանչ	Թալին	Արագածոտն	2015.06.04	Արագած
150604-4a	♀	Գյուլիգար Ավդոյան Ալիի	73	Կանչ	Թալին	Արագածոտն	2015.06.04	Արագած
150605-1a	♀	Խալիլազ Զարչոյան	65	(Խաթունարխ->) Հակկո	Թալին	Արագածոտն	2015.06.05	Արագած
150613-2a	♀	Զինա	67	(Գյալթո->) Հացաշեն	Թալին	Արագածոտն	2015.06.13	-
150613-2b	♀	Զինայի հարս	~30	Հացաշեն				
150613-2c	♂	Զինայի որդի 1	~35	Հացաշեն				
150613-3a	♀	կին 3	54	(Զվստան->) Հացաշեն	Թալին	Արագածոտն	2015.06.13	-
150614-2a	♀	Խանում	59	Սորիկ	Թալին	Արագածոտն	2015.06.14	-
150614-3a	♀	Գյոզալ	77	Սորիկ	Թալին	Արագածոտն	2015.06.14	-
150614-3c	♀	Ռուզան (Գյոզալի հարս)	~30					
150620-2a	♂	Ֆաթո	55	Մեծաձոր	Թալին	Արագածոտն	2015.06.20	Արագած
150620-3a	♂	Բադր Միոյան	80	Մեծաձոր	Թալին	Արագածոտն	2015.06.20	Արագած
150620-4a	♂	Փոթո	~60	Մեծաձոր	Թալին	Արագածոտն	2015.06.20	Արագած
150620-5a	♀	Զեզե Նադոյան	81	Մեծաձոր	Թալին	Արագածոտն	2015.06.20	Արագած
150620-5b	♀	Զեզեի հարս	~55					
150704-A1b	♂	Շալիկո	~55	Ճարճակիս	Արագած	Արագածոտն	2015.07.04	-
150704-A1c	♂	Վիտալի	~25					
150704-B1a	♂	շեյխ Տիտալ Ամարյան	80	Կանիաշիր	Արագած	Արագածոտն	2015.07.04	-
150704-B1b	♀	Նազիկ Սադոյան (Տիտալի հարս, 2)	31	(Արովյան ->) Կանիաշիր	Արագած	Արագածոտն	2015.07.04	-
150704-B1c	♀	Աննա Մարոյան	21	Կանիաշիր	Արագած	Արագածոտն	2015.07.04	-
160625-2a	♂	Ադո Սալմոյան	87	Օթևան	Թալին	Արագածոտն	2016.06.25	Արագած

160801-1a	♀	Սոնա Ասուբովա Ամոյի	46	Մայակովսկի	Աբովյան	Կոտայք	2016.08.01	(Լուսապյուղ x Հանքավան) Սևաբերդ†*
160801-3a	♂	Ռզա	85	(Ղամշլու->) Սևաբերդ	Աբովյան	Կոտայք	2016.08.01	-
160802-2a	♂	Օմար	~30	Հակկո	Թալին	Արագածոտն	2016.08.02	-
160802-2d	♀	Գուլե	56	Հակկո	Թալին	Արագածոտն	2016.08.02	-
160802-2e	♂	Նադիր	24	Հակկո	Թալին	Արագածոտն	2016.08.02	-
160804-3a	♂	Մրազ	~50	Ջրվեժ	Աբովյան	Կոտայք	2016.08.04	Աժդահակ, «Աղմաղան հյուրանոց» *
160804-3b	♀	Ղուդրաթ (Մրազի կինը)	~50					
160805-1a	♂	Մալխաս (Շենիի թոռ, շ)	~25	Երևան-Արեշ	-	-	2016.08.05	Աժդահակ, Պայտասար *
160805-1c	♀	Շենի Շարոյան Օթարի (շ)	89	(Սարգարապատ->) Երևան- Արեշ				
160805-2a	♀	Կին-1	~40	Մարմարաշեն	Մասիս	Արարատ	2016.08.05	Աժդահակ, Կզր գիարատ *
160805-2b	♀	Կին-2	~30					
160805-4a	♀	Թելի	~60	Մխչյան	Արտաշատ	Արարատ	2016.08.05	Աժդահակ, Վանքի լիճ *
160805-4b	♀	Կին-2 (Թելիի հարս)	~25	(Բամբակաշատ->) Մխչյան				
160805-6a	♂	Նորիկ	~40	Մրգավետ	Արտաշատ	Արարատ	2016.08.05	Աժդահակ, Վանքի լիճ *
160809-1a	♂	Սլավիկ Քալաշյան	32	Լուսակն	Թալին	Արագածոտն	2016.08.09	Արագած, Գեղաձոր† *
160809-2a	♀	Ֆրիազ Խուրդյան	55	Մրգաշատ	Հոկտեմբերյան	Արմավիր	2016.08.09	Արագած, Գեղաձոր† *
160810-BI abcde	5♀	Սիմա և 4 ուրիշ մոտ. նույն տարիքի երիտ. կանայք	~20-40	Սարգարապատ	Հոկտեմբերյան	Արմավիր	2016.08.10	Արագած, Նիգավան†*
160811-1a	♂	Մալխաս Դավրիշյան	~50	Ակնալիճ	Էջմիածին	Արմավիր	2016.08.11	†Լուսապյուղ x †Հանքավան *
160811-1b	♂	Վալիկո (Մալխասի եղբայր)	~55					
160811-2a	♂	Սուրիկ	28	Մայիսյան	Հոկտեմբերյան	Արմավիր	2016.08.11	†Լուսապյուղ x †Հանքավան *
160811-2c	♀	Զոյա	~60					
160811-2d	♀	Ազնիվ	~60					
160811-2e	♀	Կին-3	~40					

* - Նշված հարցազրույցները անց են կացվել համապատասխան բարձրլեռնային անասնապահական կայաններում, մյուսները՝ նշված գյուղերում:

РЕЗЮМЕ

Обряд "бука баранэ" (переводится как "невестка дождя") практиковался среди езидов, курманджиязычного населения Армении в прошлом и иногда также в наши дни. Обряд имеет несколько ожиданий и функций, в первую очередь – вызывать дождь или прекращать его. Эта церемония схожа с армянской "Нури" с ее используемыми объектами, действующими субъектами и основными ожиданиями. Но у них есть и определенные различия, связанные с исповеданием, экономикой и традиционным образом жизни езидов. В статье обряд "бука баранэ" обсуждается в контексте других верований и обрядов езидов, связанных с дождем. Мы попытались дать схематическую классификацию церемоний у езидов, призывающих или прекращающих дождь.

SUMMARY

The ceremony of "buka barane" (translated as "bride of rain") was practiced in the past and sometimes also in our days amongst kurmanji speaking population of the Republic of Armenia. The ceremony has several expectations and functions; primarily it induces or stops rainfall. This ceremony is similar to the Armenian "Nouri" with its used objects, acting subjects and principal expectations and functions. But there are certain differences related to the confession, economy and traditional lifestyle of Yezidis. In the article, the ritual of "buka barane" is discussed in the context of other believes and ceremonies of Yezidis related with rain. We tried to give schematic classification of Yezidis' ceremonies of inducing and stopping rainfall.

